



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format



**Adapt** — remix, transform, and build upon the material

1277

398 5

9-61





60 Y-5 481

01

398.5 ԳԻՐԳ

9-61

# ԱՌԱԿԱՑ

ԵՐԲԱՅԱԿԱՆ ԲՆԱԳՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

Հրահան ժողովրդական հարկերի վերաբերյալ

ԳՐԱԿԱՆ 40

## ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱԶԵՆ

1877

11425 4714

Ս.Ս.Ս.Ս.Ս.

414-ԱԶ



5049-50

Գ



1181

# ԳԻՐԲ Ա.Ռ.Ս.ԿԱՑ

Գ.Ղ.ՈՒԽ Ա

- 1 Դարայելի թաղաւորին Դաւիթի որդւոյն Սողամնին առականքը :
- 2 Իմաստութիւնը ու խրատը զիտնալու համար ,  
Հանձարին խօսքերը հասկընալու համար .
- 3 Իմաստութեան կրթութիւնը ընդունելու համար ,  
Այսինքն արդարութիւնը , դատաստանը և ուղղութիւնը .
- 4 Միամիտներուն սրամտութիւն տալու համար ,  
Ու էրիտասարդներուն զիտութիւն և հանձար :
- 5 Իմաստունը թող լսէ ու էշ իմաստութիւնը աւելցրնէ ,  
Ու հանձարեղ մարդը խոհեմութիւն ստանայ ,
- 6 Առակը ու նմանութիւնը հասկընալու համար ,  
Նաև իմաստուններուն խօսքերը ու անոնց խրթնարանութիւնները :
- 7 Իմաստութեան սկիզբը Տէրոջը վախն է ,  
Բայց յիմարները իմաստութիւնը ու կրթութիւնը կ'անարդէն :
- 8 Որդեակ իմ , բու հօրդ խրատը մտիկ ըրէ ,  
Ու բու մօրդ օրէնքը մի մերժեր .

- 9 Բանգի անոնք քու զլուխդ՝ շնորհաց պասկ ,  
 Եւ քու պարանոցդ մանեակներ պիտի ըլ-  
 լան :
- 10 Որդեակ իմ, թէ որ մեղաւորները քեզ  
 զլիւժ հանել ուզեն ,  
 Դուն աւանջ հաւանութիւն մի տար :
- 11 Թէ որ բուն , Մեզի հետ եկուր ,  
 Արեան համար դարանամուռ ըլլանք ,  
 Անմեղ մարդուն համար առանց պատ-  
 ճառի ծածուկ տեղ սպասենք .
- 12 Զանոնք գերեզմանի պէս ողջ ողջ՝  
 Եւ դուքը իջնողներուն պէս ամբողջ կըլ-  
 լենք .
- 13 Ամէն տեսակ պատուական ստացուածք  
 դտնենք ,  
 Ու մեր տունները աւարով լեցընենք .
- 14 Քու վիճակդ մեր մէջը ձգէ .  
 Ամէնքս մէկ քսակ ունենանք .
- 15 Որդեակ իմ, անոնց հետ ճամբայ մի երթար .  
 Անոնց շաւիղէն քու ոտքերդ ետ պահէ .
- 16 Բանգի անոնց ոտքերը չարութեան կը վա-  
 դեն ,  
 Եւ արիւն թափելու կ'արտորան :
- 17 Յիրաւի ամէն թռչունին աչքերուն առջևը  
 Պարսպ տեղը վարմեր կը լարուի .
- 18 Բայց անոնք իրենց արեանը համար դարան  
 կը դարձեն ,  
 Ու իրենց կենացը համար ծածուկ տեղ կը  
 սպասեն ,
- 19 Ամէն աղահչին ճամբաները ասանկ են .  
 Ահա՛նա՛նա՛նա՛նա՛ն իրեն անձատուր եղողները կը  
 մեռցընէ :
- 20 Իմատուութիւնը դուքը բարձր չափն կ'ա-  
 ղաղակէ ,

- Ու հրապարակներու մէջ իր ձայնը կու տայ :
- 21 Անիկա բազմութիւն եղած տեղերուն զլու-  
 խը՝  
 Եւ դրանց մուտքերուն մէջ կ'աղաղակէ ,  
 Ու քաղաքին մէջ իր խօսքերը կը խօսի ու-  
 իշէի .
- 22 Ով անմիտներ , մինչև ե՛րբ անմտութիւնը  
 պիտի սիրէք .  
 Մինչև է՛բ ծաղր ընողները ծաղր ընելով  
 պիտի զուարձանան ,  
 Ու յիմարները դիտութիւնը ատեն :
- 23 Իմ յանդիմանութեանս դարձէք .  
 Ահա իմ հողիս ձեր վրայ պիտի թափեմ ,  
 Իմ խօսքերս ձեզի պիտի հասկըցընեմ :
- 24 Որովհետև ես կանչեցի , ու դուք չուզեցիք  
 լսել .  
 Ձեռքս երկընցուցի , ու մտիկ ընող չեղաւ .
- 25 Հապա իմ բոլոր խրատներս մերժեցիք ,  
 Եւ իմ յանդիմանութիւնս չուզեցիք .
- 26 Ես այ ձեր թշուառութեանը վրայ պիտի  
 ճիծաղեմ ,  
 Ու ձեր վախը հասնելուն ծաղր պիտի ընեմ .
- 27 Երբոր ձեր վախը հեղեղի պէս հասնի ,  
 Ձեր թշուառութիւնը միբիկի պէս պա-  
 տահի ,  
 Եւ ձեր վրայ նեղութիւն ու տառապանք  
 դայ ,
- 28 Անատներ ինծի պիտի աղաղակեն , ու պա-  
 տասխան պիտի չտամ .  
 Չիս պիտի փնտունն ու պիտի չկրնան զըտ-  
 նել .
- 29 Որովհետև դիտութիւնը ատեցին ,  
 Ու Տերջըր վախը չընտրեցին .
- 30 Իմ խրատներս չուզեցին ,  
 Ու բոլոր յանդիմանութիւնս անարգեցին .

- 31 Ուրեմն անոնք իրենց ճամբուն պտուղէն պիտի ուտեն ,  
Ու իրենց խորհուրդներէն պիտի կշտանան :
- 32 Վասն զի անմիտներուն խտորելը զիրենք պիտի մեռցընէ ,  
Եւ յիմարներուն անհողութիւնը զիրենք պիտի կորսնցընէ ,
- 33 Բայց ինծի մտիկ ընողը սպասովութեամբ պիտի բնակի ,  
Ու չարիքներու վախէն հանդարտ պիտի ըլլայ :

ԳԼ Բ

- 1 Որդեակ իմ , թէ որ իմ խօսքերս ընդունին ,  
Ու իմ պատուիրանքներս քովը պահես ,
- 2 Եւ յպէս որ ականջդ իմաստութեան տաս ,  
Ու սիրող հանձարին բանաս ,
- 3 Թէ որ դուն իմաստութիւնը չի կանչես ,  
Եւ քու ձայնդ հանձարին ուղղես ,
- 4 Թէ որ զանիկա արծաթի պէս փնտռես ,  
Ու ծածուկ դանձերու պէս ինդրես ,
- 5 Անատներ Տերօջը վախը պիտի հասկնաս ,  
Եւ Աստուծոյ զիտութիւնը պիտի դանես .
- 6 Վասն զի իմաստութիւնը Տէրը կու տայ .  
Գիտութիւնը ու հանձարը անոր բերնէն է :
- 7 Անիկա ուղիղներուն համար փրկութիւն կը պահէ .  
Անիկա ուղղութեամբ քալողներուն վահանն է ,
- 8 Որ արդարութեան ճամբաները պաշտպանէ ,  
Ու իր սուրբերուն ճամբան պահէ :
- 9 Անատներ արդարութիւնը , դատաստանը եւ ուղղութիւնը ,  
Ամէն աղէկ ճամբան պիտի հասկնաս :

- 10 Երբոր իմաստութիւնը քու սրտիդ մէջը մտնէ ,  
Եւ զիտութիւնը քու հողույդ ախորժեկ ըլլայ ,
- 11 Խոհանութիւնը քեզ պիտի պահէ ,  
Ու հանձարը քեզ պիտի պաշտպանէ ,
- 12 Որ քեզ չար մարդուն ճամբայէն ,  
Կենդութիւններ խօսող մարդէն ազատէ .
- 13 Անոնք որ ուղիղ ճամբան թողոյցեր են ,  
Որ խաւար ճամբաներու մէջ քայլեն .
- 14 Չարութիւն բնակով կ'ուրախանան ,  
Եւ չարին նենդութիւններովը կը յնձան .
- 15 Որոնց ճամբաները ծուռ են ,  
Ու անոնց ընթացքը խտորնակ է :
- 16 Որ քու քեզ ազատէ օտար կնիկէն ,  
Շողորթութիւն խօսող օտար կնիկէն .
- 17 Ան որ իր երիտասարդութեան բարեկամը կը թողու ,  
Եւ իր Աստուծոյն ուխտը կը մոռնայ .
- 18 Քանզի անոր տունը մահուան կը տանի ,  
Ու անոր շուրիչները մեռելներուն :
- 19 Անոր գայտոյնները բնու չեն դառնար ,  
Եւ կենաց ճամբաներուն չեն հասնիր :
- 20 Որպէս զի բարի մարդուն ճամբան երթաս ,  
Ու արդարներուն շուրիչները պահես :
- 21 Քանզի ուղիղները երկրի վրայ պիտի բնակին ,  
Եւ կատարեալները անոր մէջը պիտի մնան :
- 22 Բայց ամբարիշտները երկրէն պիտի կորսուին ,  
Ու անօրէնները անկէ պիտի փրցուին :

ԳԼ Գ

- 1 Որդեակ իմ , մի մոռնար իմ օրէնքս ,  
Հապա քու սիրող թող իմ պատուիրանքներս պահէ .

- 2 Ինչու որ քեզի երկայն օրեր ու կենդանու-  
թեան տարիներ  
Եւ յաջողութիւն պիտի աւելցնեն :
- 3 Ողորմութիւնը ու ճշմարտութիւնը քեզ  
չթողուն .  
Ջաննք քու պարանոցիդ վրայ կապէ ,  
Քու սրտիդ տախտակին վրայ գրէ զանոնք :
- 4 Այսպէս Աստուծոյ և մարդոց առջևը  
Հնորհք ու բարի համարում պիտի գտնես :
- 5 Քու բոլոր սրտովդ Տէրոջը ապաւինէ ,  
Եւ քու իմաստութեանդ մի վստահի՛ր :
- 6 Քու ամէն ծամբաներուդ մէջ զանիկա ծանչ-  
ցիր ,  
Ու անիկա քու շաւիղներդ պիտի ուղղէ :
- 7 Դուն քու աչքիդ առջևը իմաստուն մի ըլ-  
լար .  
Տէրոջմէ վախցիր ու չարութենէ ետ քաշուէ :
- 8 Ասիկա քու ջեղերուդ առողջութիւն ,  
Եւ քու ոսկորներուդ պարարտութիւն կ'ըլ-  
լայ :
- 9 Տէրոջը պատիւ ըրէ քու ստոցուածքէդ  
Եւ քու բոլոր բերքերուդ երտխայրիներէն .
- 10 Եւ քու շտեմարաններդ առատութեամբ  
պիտի լեցունին ,  
Ու հնձաններէդ նոր զինին դուրս պիտի  
թափի :
- 11 Որդեակ իմ, Տէրոջը խրատը մի անարդէր ,  
Ու անոր յանդիմանութենէն մի թունւար .
- 12 Վասն զի Տէրը իր սիրածը կը խրատէ ,  
Ինչպէս որ հայր մը իր սիրական զաւակին  
ի՛նչէ :
- 13 Երանի ան մարդուն , որ իմաստութիւն կը  
գտնէ ,  
Ու ան մարդուն՝ որ հանճար կը ստանայ .

- 14 Վասն զի անոր շահը արծաթի շահէն աղէկ է ,  
Ու անոր արդիւնքը մաքուր ոսկիէն :
- 15 Անիկա զոհարներէն պատուական է .  
Եւ քու բոլոր ցանկալի բաներդ չեն կրնար  
անոր հաւասարիլ :
- 16 Անոր աջ ձեռքին մէջ՝ օրերու երկայնու-  
թիւն ,  
Եւ ձախ ձեռքին մէջ հարստութիւն ու  
փառք կայ .
- 17 Անոր ծամբաները հաճոյական ծամբաներ  
են ,  
Եւ անոր բոլոր շաւիղները խաղաղութիւն  
են :
- 18 Անիկա իրեն յարողներուն կենաց ծառ է .  
Ու զինքը բռնողները երջանիկ կ'ըլլան ,
- 19 Տէրը իմաստութեամբ հիմնեց երկիրը ,  
Եւ հանճարով հաստատեց երկինքը :
- 20 Անոր գիտութեամբը անդունդները կը պատ-  
ուին ,  
Ու ամպերը յող կը կաթեցնեն :
- 21 Որդեակ իմ, ասոնք քու աչքերուդ առջևէն  
չերթան .  
Իմաստութիւնը ու խոհեմութիւնը քու  
պահէ .
- 22 Եւ քու հոգևոյդ կեանք՝  
Ու քու պարանոցիդ զարդ ըլլան :
- 23 Անատներ ծամբադ ապահովութեամբ պիտի  
բայլես ,  
Եւ քու ոտքդ պիտի չսահի :
- 24 Թէ որ պառկիս՝ պիտի չվախնաս ,  
Ու թէ որ քնանաս՝ քունդ անոյշ պիտի ըլ-  
լայ :
- 25 Պիտի չվախնաս յանկարծահաս վախէն ,  
Ոչ ալ ամբարիշտներուն կորուստէն՝ երբոր  
գայ .

- 26 Վասն զե .բու. յշարդ Տէրը պիտի ըլլայ,  
Էւ .բու. ոտքք պիտի պահէ, որ չբռնուի:
- 27 Երբոր ձեռքէդ աղէկութիւն ընել կու զայ,  
կարօտ եղողէն մի արդիւր զանկիկա:
- 28 Բու դրացիիդ բնաւ մի բւեր, Գնա ու դար-  
ձեալ եկուր,  
Կամ վաղը կու տամ, երբոր .բու. քովդ կայ:
- 29 Բու դրացիիդ դէմ չարութիւն մի մտածեր,  
Քանի որ անիկա վստահութեամբ .բեզէ Հետ  
կը բնակի:
- 30 Առանց պատճառի մարդու Հետ մի վիճիր,  
Երբոր անիկա .բեզէ չարութիւն մը ըրած չէ:
- 31 Բռնաւոր մարդուն մի նախանձիր,  
Ու անոր ճամբաները բնաւ մի ընտրիր
- 32 Վասն զի ծուռ մարդը Տէրովը առջևը պիղծ է.  
Բայց Անոր ընտանութիւնը արդարաց Հետ է:
- 33 Ամբարիշտ մարդուն տանը մէջ Տէրովը ա-  
նէժքը կայ.  
Բայց արդարներուն բնակարանը Անիկա  
կ'օրհնէ:
- 34 Յիրաւի անիկա ծաղր ընողները ծաղր կ'ընէ,  
Բայց խոնարհներուն շնորհք կու տայ:
- 35 Իմաստունները փառք պիտի ժառանգեն,  
Բայց յիմարներուն բարձրանալը անարդանք  
պիտի ըլլայ:

## ԳԼ Դ

- 1 Որդիք, Յէր Հօրը խրատը լսեցէք,  
Ու մտիկ ըրէք որ իմաստութիւնը ճանչնար:
- 2 Վասն զի ձեզ աղէկ կրթութիւն կու տամ,  
Իմ օրէնքս մի թողուր:
- 3 Քանզի ես իմ Հօրս տղան էի,  
Փափուկ ու սիրելի՛ իմ մօրս առջև:
- 4 Անիկա խնձի կը սորվեցնէր ու կ'ըսէր,

- Բու սիրող իմ խօսքերս թող բռնէ.  
Իմ պատուէրանքներս պահէ ու ապրէ:
- 5 Իմաստութիւն ստացիր, խոհեմութիւն  
ստացիր.  
Մի մոռնար, ու իմ բերնիս խօսքերէն մի  
խտորիր:
- 6 Ձանիկա մի թողուր, ու անիկա .բեզ պիտի  
պահէ.  
Ձանիկա սիրէ, ու անիկա .բեզ պիտի պաշտ-  
պանէ:
- 7 Ահէ Բռնէ՛ զլուխը իմաստութիւնն է, իմաս-  
տութիւն ստացիր.  
Ու ամէն ստացած բաներուդ Հետ խոհեմու-  
թիւն ստացիր:
- 8 Ձանիկա մեծարէ, ու անիկա .բեզ պիտի  
բարձրացնէ.  
Թէ որ զանիկա զրկես՝ .բեզ պիտի պատուէ:
- 9 Անիկա .բու. զլուսուդ շնորհաց զարդ պիտի  
տայ.  
Բեզէ փառաց պսակ պիտի պարգևէ:
- 10 Մտիկ ըրէ, որդեակ իմ, ու իմ խօսքերս ըն-  
դունէ.  
Էւ .բու. կենացդ տարիները պիտի շատնան:
- 11 Բեզէ իմաստութեան ճամբուն մէջ +ուէլ  
սորվեցուցի.  
Բեզ ուղղութեան շաւիղներուն մէջ պտտու-  
ցուցի:
- 12 Որ քայլերու ատենդ ոտքիդ քայլերը չնեղ-  
նան,  
Ու վազելու ատենդ չտահնա:
- 13 Ամուր բռնի խրատը ու բնաւ մի թողուր.  
Ձանիկա պահէ, վասն զի .բու. կենանքդ անի-  
կա է:
- 14 Ամբարիշտներուն ճամբան մի երթար,  
Ու չարերուն ճամբուն մէջ մի քայլեր:

- 15 Անկէ զգուշացիր, անոր քովէն մի անցնիր .  
Անկէ խոտորէ ու անցիր :
- 16 Վասն զի անոնք մինչև որ չարութիւն չընեն՝  
չեն քնանար .  
Ու թէ որ փշիւ չկործանեն՝ քուններին կը  
փակուի :
- 17 Քանզի անոնք ամբարշտութեան հացը կ'ու-  
տեն ,  
Ու անիրաւութեան զինին կը խմեն :
- 18 Բայց արդարներուն ճամբան ծագող լոյսին  
պէս է .  
Որ երթայով կը լուսաւորուի , մինչև որ կա-  
տարեալ օր ըլլայ :
- 19 Ամբարիշտներուն ճամբան խաւարի պէս է ,  
Ու չեն զիտեր թէ ինչ բանով երեսց ոտքը  
պիտի սահի :
- 20 Որդեակ իմ, մտիկ ըրէ իմ խօսքերս .  
Քու ականջներդ իմ խօսքերուս տուր :
- 21 Անոնք քու աչբերուդ առջևէն չերթան .  
Զանոնք քու սրտիդ մէջը պահէ :
- 22 Վասն զի զանոնք գտնողներուն անոնք կեանք  
են ,  
Եւ անոնց բոլոր մարմնոյն՝ բժշկութիւն :  
23 Ամէն զգուշութիւնով քու սիրտդ պահէ ,  
Քանզի կենաց աղբիւրները անկէ են :
- 24 Ծուռ բերանը քեզմէ մկկի ըրէ ,  
Ու անիրաւ շրթունքները քեզմէ հեռացուր :
- 25 Քու աչբերդ ուղիղ նային ,  
Ու արտեանունքներդ շիտակ դէպ 'ի առջևդ  
ըլլան :
- 26 Ոտքերուդ շաւիղները շիտկէ ,  
Եւ քու բոլոր ճամբաներդ հաստատունն :
- 27 Աջ կամ ձախ կողմը մի խոտորիբ .  
Ոտքդ չարութենէ դարձուր :

ԳԼ Ե

- 1 Որդեակ իմ, մտիկ ըրէ իմ խմտութեանս,  
Եւ քու ականջդ իմ հանձարիս տուր ,  
2 Որ խոհեմութիւն պահես ,  
Ու քու շրթունքներդ զիտութիւն պահեն :  
3 Վասն զի օտար կնկան շրթունքներէն խո-  
րիսիբ մտը կը կաթի ,  
Եւ անոր քիմքը եղէն կակուղ է .  
4 Բայց անոր վախճանը օշնդրի պէս դառն՝  
Ու երկայրի սուրի պէս սրած է :  
5 Անոր ոտքերը մահուան կ'իջնեն ,  
Ու անոր քայլերը դժոխքը կը հասնին :  
6 Անոր ճամբաները փոփոխական են , ու չես  
կրնար շուտ գիտնալ ,  
Որ չըլլայ թէ կենաց ճամբան մտածես :  
7 Եւ հիմա , ով որդիք , ինծի մտիկ ըրէք ,  
Ու իմ բերնիս խօսքերէն մի խոտորիք :  
8 Ան կնիկէն ճամբադ հեռացուր ,  
Ու անոր տանը դրանք մի մտնեար .  
9 Զըլլայ որ քու փառքդ ուրիշներու՝  
Եւ տարիներդ անողորմ՝ մարդու տաս .  
10 Զըլլայ որ օտարները քու զօրութենէդ կըչ-  
տանան ,  
Ու քու վաստակդ օտարներուն տունը մնայ .  
11 Եւ քու վերջին ատենդ չհառայես ,  
Երբոր քու մարմինդ ու անդամներդ մաշին ,  
12 Ու չունս , Ես է՛նչպէս խրատը ատեցի ,  
Ու իմ սիրտս յանդիմանութիւնը անար-  
դեց .  
13 Եւ իմ ուսուցիչներուս խօսքը մտիկ չըրի ,  
Ու իմ ականջս զիս վարժողներուն չտուի .  
14 Ժողովքի ու ժողովուրդի մէջ  
Գրեթէ ամէն Դիւան թշուառութեան  
հանդիպեցայ :

- 15 Գունն քու ջրակոյտեղ ջուր խմէ,  
Եւ քու ջրհորից մէջը վազող ջուրէն :
- 16 Քու աղբիւրներդ դուրս տարածուին,  
Իւշի՞ք ջուրերու վտակները ճրագարակներուն մէջ :
- 17 Անոնք մինակ քուկդ ըլլան,  
Ու չէ թէ քուկդ և օտարներուն :
- 18 Քու աղբիւրդ օրհնեալ ըլլայ .  
Եւ քու երիտասարդութեանդ կնկանը հետ ուրախ եղի :
- 19 Անիկա չէ՞ր սիրել եղնիկի յէս ,  
Եւ շնորհալի այծեման յէս ըլլայ .  
Ամէն ատեն անոր ստիւքները քեզ կշտա-  
ցընեն ,  
Ու միշտ անոր սիրովը զմայլես :
- 20 Եւ ինչո՞ւ, որդեակ իմ, դուն օտար կնկան  
մը «Կէր՞իզ զմայլես ,  
Ու օտար կնկան ճոյր գրկես :
- 21 Վասն զի մարդուն ճամբաները Տէրոջը աչ-  
քերուն առջն են ,  
Ու անոր ամէն քայլերը Ի՛նչ կը կշռէ :
- 22 Չարագործը իր անօրէնութիւնները պիտի  
բռնեն .  
Ու անիկա իր մեղքին չուաններովը պիտի  
բռնուի :
- 23 Անիկա առանց խրատի պիտի մեռնի ,  
Ու իր մեծ յիմարութեամբը պիտի մնլորի :

ԳԼ. Զ

- 1 Որդեակ իմ, թէ որ քու բարեկամիդ հա-  
մար երաշխատօր եղար ,  
Կա՞մ օտար մարդու համար քու ձեռքդ տուիր ,  
2 Քու բերնիդ խօսքերովը որողայթը ինկար ,  
Բերնիդ խօսքերովը բռնուեցար .

- 3 Որդեակ իմ, շուտով ասանկ ըրէ որ ազա-  
տես .  
Որովհետեւ դուն քու բարեկամիդ ձեռքը  
մտար ,  
Գնա քու բարեկամիդ խնարհէ  
Ու զանիկա թախանձէ :
- 4 Աչքերուդ քուն՝  
Ու արտեանունքներուդ նիրհում մի տար .
- 5 Քեզ ազատե ինչպէս որ այծեամը սրտաբէ՛ն  
ձեռքէն ,  
Կամ թռչուը ճաւորսին ձեռքէն Գ՝ուսի՞ք :
- 6 Ով ծոյլ , մըջիւնին գնա ,  
Անոր ճամբաները տես ու իմաստուն եղիր .
- 7 Վասն զի անիկա Բէ՛ն իշխան ,  
Ոստիկան , կամ տիրոջ շունի ,  
8 Խր կերակուրը ամառուընէ կը պատրաստէ ,  
Խր ուտելըը հունձքի ատեն կը ժողվէ :
- 9 Ով ծոյլ , մինչև երբ կը պառկիս ,  
Քունեդ երբ պիտի արթըննաս :
- 10 Քիչ մը քնանաս , քիչ մը նիրհես ,  
Ու քիչ մը ձեռք ձեռքի վրայ դնես ննջելու  
համար .
- 11 Անատներ քու աղքատութիւնդ ճամբորդի  
պէս պիտի գայ ,  
Ու կարօտութիւնդ՝ սպասազինեալ մարդու  
պէս :
- 12 Անօրէն ու չար մարդը  
Ծուռ բերնով կը շարժի .
- 13 Անիկա իր աչքերովը ակնարկութիւն կ'ընէ ,  
Ոտքերովը կը խօսի ,  
Ու մատերովը բան կը սորվեցընէ .
- 14 Անոր սրտին մէջը ծուռութիւն կայ ,  
Միշտ չարութիւն կը հնարէ - կռիւներ կը  
հանէ :

15 Ասոր համար անոր կորուստը յանկարծ պիտի գայ .

Անիկա յանկարծ պիտի կտորուի, ու անոր դարման պիտի չգտնուի :

16 Տէրը աս վեց բանէն կը դռուի, ու անոր հոգւոյն առջըը եօթը բան պիղծ է .

17 Ամբարտաւան աչքեր, ստախոս լեզու .  
Եւ անմեղ արիւն թափող ձեռքեր ,

18 Ձար խորհուրդներ հնարող սիրտ ,  
Չարութիւն ընելու համար շուտ վազող ոտքեր ,

19 Ստութիւն խօսող անիրաւ վկայ  
Ու եղբարց մէջ կռիւներ ցանող Բարդ :

20 Որդեակ իմ, քու հօրդ պատուիրանքը պահէ,  
Եւ քու մօրդ օրէկքը մի մերժեր :

21 Չանոնք միշտ քու սրտիդ վրայ կապէ,  
Չանոնք քու պարանոցդ կախէ :

22 Քալած ատենդ անոնք քեզի առաջնորդութիւն ընեն ,

Քնացած ատենդ քեզ պահպանեն ,  
Ու արթընցած ատենդ քեզի հետ խօսակցին :

23 Քանզի պատուիրանքը ճրագ ու օրէնքը լոյս է,  
Եւ խրատին յանդիմանութիւնները կենաց ճամբայ են .

24 Որ քեզ գէշ կնիկէն՝  
Օտար կնկան շողորթթող լեզուէն պահէ :

25 Սրտիդ մէջ անոր զեղեցկութեանը մի ցանկար .

Եւ քեզ իր արտեանունքներովը չբռնէ :

26 Վասն զի պոռնիկ կնկան պատճառաւը  
Մարդ մինչև պատառ մը հացի կարգի վէճայ .

Եւ շուտ առնակիւնը պատուական հօգին կ'որայ :

27 Հնար է որ մէկը իր ծոցը կրակ դնէ,  
Ու հանդերձները չայրին .

28 Հնար է որ մէկը կրակի կայծերու վրայ քալէ  
Ու անոր ոտքերը չայրին :

29 Ասոր պէս է իր դրացիին կնկանը քով գացողն ալ .

Ով որ անոր դպչի՝ անմեղ չըլլար :

30 Գողը թէ որ անօթութեան համար ու իր փորը կշտացնելու համար դողութիւն ընէ ,

Չեն քամահրեր զանիւն :

31 Սակայն թէ որ գտնուի՝ եօթնապատիկ կը հատուցանէ ,

Իր տանը բոլոր ինչքը կու տայ :

32 Կնկան հետ շնութիւն ընողին խելքը պակաս է .

Աս բանը ընողը իր հոգին կը կորսնցընէ :

33 Անիկա վէրք ու անարգանք կը գտնէ,  
Եւ անոր նախատիքը անջնջելի է :

34 Քանզի նախանձը էրկանը կատարութիւնն է,  
Ու անիկա վրէժխնդրութեան օրը չխնայեր .

35 Անիկա բնաւ մէկ փրկանքի մը չնայիր,  
Կաշառք ալ շատցընելու ըլլաս՝ անիկա չհաճիր :

ԳԼ Է

1 Որդեակ իմ, պահէ իմ խօսքերս ,  
Ու իմ պատուիրանքներս քու քովդ ծածկէ :

2 Իմ պատուիրանքներս պահէ որ ապրիս,  
Ու իմ օրէնքիս քու աչքերուդ ըրերին պէս նայ :

3 Չանոնք մատերուդ վրայ կապէ,  
Չանոնք սրտիդ տախտակին վրայ գրէ :

4 Իմաստութեան բռէ, Դուռն իմ բոլորս ես .  
Ու խոհեմութեան՝ Ծանօթ կանչէ :

5 Որ քեզ օտար կնիկէն՝

5049-50



- Շողորորթութեամբ խօսող օտար կնիկէն պահէն :
- 6 Վասն զի իմ տանս պատուհանէն՝  
Իմ վանդակէս նայեցայ :
- 7 Եւ անմիտներուն մէջը տեսայ,  
Երիտասարդներուն մէջը պակասամիտ պատանի մը դտայ,
- 8 Որ փողոցին մէջ ան կնոջը քու՞շ անկիւնին քովէն կ'անցնէր,  
Ու անոր տանը ճամբան բռնեց,
- 9 Երբոր իրիկուն եղաւ, օրը տարածամեցաւ  
Ու գիշերուան մութը տիրեց :
- 10 Եւ ահա անոր առջևը կնիկ մը ելաւ .  
Անիկա պունկիկի կերպարանք ու ննդաւոր սիրտ մը ունէր :
- 11 Անիկա ազազակող ու անզգամ էր,  
Ու անոր ոտքերը իր տանը մէջ չէր կենար :
- 12 Երբեմն դուրսը, երբեմն հրապարակները,  
Եւ ամէն անկիւնի քով դարանամուտ կ'ըլլար :
- 13 Զանիկա բռնեց համբուրեց,  
Ու լըրը երեսով անոր ըստ,
- 14 Իմ քովս խաղաղութեան զո՞հեր կան .  
Ես այսօր իմ ուխտերս կատարեցի :
- 15 Անոր համար ելայ քեզ դիմաւորելու,  
Քու երեսդ փնտռելու, ու քեզ դտայ :
- 16 Իմ անկողինս ծածկոցներով զարդարեք եմ՝  
Եղիպտոսի ծաղկանկար բնէզբով .
- 17 Անկողինիս վրայ զմուռս,  
Հայուէ ու կինամոն ցաներ եմ :
- 18 Եկուր մինչև առտու սիրով զուարճանալը,  
Ու ցանկութիւններով զրօսնուելը :
- 19 Վասն զի երկիս տունը չէ,

- Անիկա հեռու ճամբայ դնաց .
- 20 Ստակին քսակը իր հետը առաւ,  
Եւ լուսնի լրման օրը իր տունը պիտի դառնայ :
- 21 Այսպէս իր շատ խօսքերովը զանիկա հրապուրեց,  
Ու իր թուներներուն շողորորթութիւնովը զանիկա ստիպեց :
- 22 Ան ու շետակ կնկանը ետեւէն՝  
Սպանդանոցը դացող արջաուի պէս՝  
Պատժուելու էօջող կապուած յիմարի մը պէս կ'երթայ,
- 23 Մինչև որ նետը անոր լեարդը ծակէ .  
Ինչպէս որ թռչուն մը արտորալով դէպ 'ի ծուղակը կ'երթայ,  
Ու չգիտեր որ անիկա իր հոգւոյն համար լարուած է :
- 24 Եւ հիմա, ով որդիք, ինձի մտիկ ըրէք,  
Ու իմ բերնիս խօսքերուն ականջ դրէք :
- 25 Քու սիրտդ անոր ճամբաներուն շտապորի,  
Եւ անոր շաւիղներուն մէջը չմոլորիս :
- 26 Վասն զի անիկա շատերը խցոտեց ու կործանեց,  
Ու անոր բոյր մեռցուցած մարդիկը զօրաւոր էին :
- 27 Անոր տունը դժոխքին ճամբաններն է,  
Անոնք մահուան շտամարանները կ'իջնեն :
- ԳԼ . Ը
- 1 Ահա իմաստութիւնը կը կանչէ,  
Ու խոհեմութիւնը իր ձայնը կու տայ :
- 2 Անիկա բարձր տեղերու զըլլալ, ճամբու վրայ  
Եւ շաւիղներու մէջ կը կայնի :

- 3 Անիկա դռներուն քովը՝ քաղաքներուն բերանը  
 Ու դռներուն մուտքը աղաղակելով՝ Գեհե՛ ,
- 4 Ով մարդիկ , ձեզի կը կանչեն՝  
 Եւ իմ ձայնս մարդոց որդիներուն է :
- 5 Ով տղէտներ , իմաստութիւն սորվեցէք .  
 Ով անմիտներ , իմացող սիրտ ունեցէք :
- 6 Լսեցէք , վասն զի ազնիւ բաներ պիտի խօսիմ ,  
 Ու իմ շրթուներս պիտի բանամ ուղիղ բաներ Խօսելու համար :
- 7 Քանզի իմ քիմքս ճշմարտութիւն պիտի խօսի  
 Բայց իմ շրթունքս ամբարշտութենէ կը զգուհի :
- 8 Բերնիս բոլոր խօսքերը արդարութեամբ են ,  
 Եւ անոնց մէջը խտտորնակ ու ծուռ բան չկայ :
- 9 Ամէնն ալ հասկըցողն ուղիղ են ,  
 Ու դիտութիւն գտնողներուն շիտակ են :
- 10 Իմ խրատս առէք , և ոչ թէ արծաթ .  
 Ու ընտիր ոսկիէն աւելի դիտութիւնը արժէքէ :
- 11 Վասն զի իմաստութիւնը գոհարներէն աղէկ է .  
 Եւ բոլոր ցանկալի բաները չեն կրնար անոր հասասարիլ :
- 12 Ես իմաստութիւնս սրամտութեան հետ կը բնակիմ ,  
 Եւ ձարտարութեանց դիտութիւնը կը զըտնեմ :
- 13 Տէրոջը վախը չարութիւնը ատելն է .  
 Ես հպարտութիւնը , ամբարտաւանութիւնը , չար ծամբան  
 Ու նենգաւոր բերանը կ'ատեմ .
- 14 Խորհուրդը և խոհականութիւնը իմն է .

- Ես եմ հանձարը՝ ու զօրութիւնը իմն է :
- 15 Թագաւորները ինձմով կը թագաւորեն ,  
 Ու նախարարները Ինձմով արդարութեան կանոններ կը դնեն :
- 16 Ինձմով կ'իշխեն իշխանները ,  
 Ազնուականները ու երկրիս բոլոր դատաւորները :
- 17 Ես կը սիրեմ զիս սիրողները ,  
 Եւ զիս կանուխ փնտռողները զիս կը դռնեն :
- 18 Իմ քով հարստութիւն ու փառք ,  
 Ընտիր ստացուածք և արդարութիւն կայ :
- 19 Իմ պտուղս ոսկիէն ու մարութ ոսկիէն ,  
 Եւ իմ արդիւնքս ընտիր արծաթէն աղէկ է :
- 20 Ես արդարութեան ձամբուն մէջ՝  
 Իրականց շաւիղներուն մէջ կը քայլեմ ,
- 21 Որ զիս սիրողներուն ստացուածք ժառանգեցընեմ .  
 Ու անոնց դանձերը պիտի լեցընեմ :
- 22 Տէրը իր ձամբուն սկիզբը  
 Իր վաղեմի գործքերէն առաջ զիս ստացեր էր :
- 23 Ես յառաջմանէ՝  
 Երկրիս սկիզբէն առաջ օծուեցայ :
- 24 Անդունդները չեղած՝  
 Առատ ջուրերուն աղբիւրները չեղած ես ծընած էի :
- 25 Լեռները տեղաւորուած՝  
 Բլուրներէն առաջ ես ծնած էի :
- 26 Տակաւին երկիրը ու բաց տեղուանքը  
 Եւ աշխարհիս հողերուն առջինը չստեղծած ,
- 27 Երբոր երկիրները կը պատրաստէր .  
 Ու անդնդոց երեսին վրայ կամար կը ձգէր ,  
 Ես հոն էի :
- 28 Երբոր վերի ամպերը կ'ուժովցընէր ,  
 Եւ անդնդոց աղբիւրները կը հաստատէր ,

- 29 Երբոր ծովուն կանոն կը դնէր ,  
Որ ջուրերը իր հրամանէն դուրս չըլեն ,  
Ու երբոր երկրիս հիմերը կը ձգէր ,
- 30 Անատենը ես անոր քովը ճարտարացեալ էի ,  
Եւ ամէն օր աւոր գուարձուածիւնն էի ,  
Ու միշտ անոր առջևը կ'ուրախանայի :
- 31 Ես աշխարհէս մէջ , անոր երկրին վրայ  
կ'ուրախանայի ,  
Ու իմ գուարձուածիւնս մարդոց որդիներուն  
հետ էր :
- 32 Եւ հիմա , ով որդիք , ինձի մտիկ ըրէք .  
Վասն զի իմ ճամբաներս պահողները երջա-  
նիկ կ'ըլան :
- 33 Խրատ մտիկ ըրէք ու իմաստուն եղէք ,  
Ու զաւելի մի մերժէք :
- 34 Երանի ան մարդուն որ ինձի մտիկ կ'ընէ ,  
Ամէն օր իմ դռներուս քովը կը հսկէ ,  
Եւ իմ դրանդիրներս կը դիտէ :
- 35 Ինչու որ զիս դանողը կէտիք կը գտնէ ,  
Ու Տերութիւն շնորհք որ տանայ :
- 36 Բայց ինձի զէմ մեղանչողը իր հողոյն ա-  
նիրաւութիւն կ'ընէ .  
Բոլոր զիս ատողները մահը կը սիրեն :

ԳԼ Թ

- 1 Իմաստութիւնը իր տունը շինեց ,  
Ու իր եօթը սիւները կանգնեց .
- 2 Իր անասունները մորթեց , իր զինին խառ-  
նեց  
Ու իր սեղանը պատրաստեց :
- 3 Անիկա իր աղախինները խրկեց ,  
Ու քաղաքին բարձր տեղերուն վրայ կը  
կանէ :
- 4 Ով որ պարզամիտ է՝ թող հոս գայ .

- Ու պակասամիտ եղողին կ'ըսէ ,
- 5 Եկէք իմ հացէս կերէք ,  
Ու խառնած զինիէս խմեցէք .
- 6 Յիմարութիւնը թողուցէք՝ որ ապրիք ,  
Ու խոհմութեան ճամբունն մէջ քայլե-  
ցէք :
- 7 Ծաղը ընողը յանդիմանողը իրեն անար-  
գանք՝  
Ու ամբարիշտը խրատողը իրեն արատ կը  
վաստըկի :
- 8 Ծաղը ընողը մի յանդիմանէր , որ չըլլայ  
թէ քեզի թշնամի ըլլայ .
- Իմաստունը յանդիմանէ , ու քեզ պիտի սիրէ :
- 9 Իմաստունին երաբ տուր , և աւելի իմաս-  
տուն պիտի ըլլայ .
- Արդար մարդուն ստրկեցուր , ու էր իմաս-  
տութիւնը պիտի աւելընէ :
- 10 Իմաստութեան սկիզբը Տէրոջը վախն է ,  
Ու Ամենասուրբին զիտութիւնը հանձար է :
- 11 Վասն զի քու օրերդ ինձմով պիտի շատնան ,  
Եւ քեզի կենաց տարիներ պիտի աւելնան :
- 12 Թէ որ իմաստունն էս , քեզի իմաստունն էս ,  
Ու թէ որ ծաղը ընող էս , աւոր պարէ՞ք մի-  
նակ դուն պիտի կրես :
- 13 Անդգամ կնիկը աղաղակող կ'ըլլայ .  
Անիկա անմիտ է ու բան մը չգիտեր :
- 14 Եւ քաղաքին բարձր տեղուանքը՝  
Իր տանը դուռը աթոռի վրայ կը նստի ,
- 15 Որ իրենց ճամբան շտակ դացող  
Անցատորները կանէ ,
- 16 Ով որ պարզամիտ է թող հոս գայ .  
Ու պակասամիտ եղողին կ'ըսէ ,
- 17 Գողցուած ջուրերը անոյշ են ,  
Եւ գաղտուկ հացը համով կ'ըլլայ :

- 18 Բայց անիկա չգիտեր որ ան տեղը մեռելներ կան,  
Ու անոր հրաւիրած մարդիկը դժոխքին ան-  
շունդներուն մէջն են :

## ԳԼ Ժ

## Սողոմոնին առակները :

- 1 Իմաստուն տղան իր հայրը կ'ուրախացրնէ .  
Բայց անմիտ տղան իր մօրը տրտմութիւն է :  
2 Անօրէնութեան դանձերը օգուտ չեն ըներ .  
Բայց արդարութիւնը մահուանէ կ'ազատէ :  
3 Տէրը արդարին հոգին անօթի չթողուր ,  
Բայց ամբարիշտներուն ցանկութիւնը կը  
խափանէ :  
4 Ծոյլ ձեռքով բանողը աղքատ կ'ըլլայ ,  
Բայց ժիւր մարդոց ձեռքը հարստութիւն կը  
ըներէ :  
5 Ան որ ամառը կը ժողվէ՝ խոհեմ տղայ է .  
Հունձրի ատեն քնացողը ամօթոյ պաաճառ-  
եղող տղայ է :  
6 Արդարին զխուճ վրայ օրհնութիւններ կան .  
Բայց բռնութիւնը ամբարիշտներուն բերանը  
կը գոցէ :  
7 Արդարներուն յիշատակը օրհնեալ կ'ըլլայ .  
Բայց ամբարիշտներուն անունը կը փոխի :  
8 Իմաստուն սիրտ ունեցողը պատուիրանքն-  
ըր կը բռնէ .  
Բայց յիմար շրթունք ունեցողը կը կործանի :  
9 Կատարելութեամբ քալողը ապահովու-  
թեամբ կը քայլէ .  
Բայց իր ճամբաները ծռողը պիտի ճանչ-  
ցուի :  
10 Աչքով ակնարկութիւն ընողը նեղութիւն  
կու տայ .

- Ու յիմար շրթունք ունեցողը կը կործանի :  
11 Արդարին բերանը կենաց աղբիւր է .  
Բայց բռնութիւնը ամբարիշտներուն բերա-  
նը կը գոցէ :  
12 Ատելութիւնը կռիւներ կը հանէ .  
Բայց սէրը ամէն յանցանքները կը ծածկէ :  
13 Իմաստունին շրթանցը վրայ իմաստութիւն  
կը գտնուի .  
Բայց պակասամիտ եղողին կռնակին համար  
գաւաղան դէր է :  
14 Իմաստունները զիտութիւն կը գանձեն .  
Բայց յիմարին բերանը կործանման մօտ է :  
15 Հարուստին ճոխութիւնը իր ամուր քա-  
ղարն է .  
Բայց տնանկներուն աղքատութիւնը իրենց  
կործանումն է :  
16 Արդարին դործը կենաց համար է .  
Ի՜նչ ամբարշտին արդիւնքը մեղաց համար է :  
17 Խրատ պահողը կենաց ճամբուն մէջ է .  
Բայց յանդիմանութիւնը մերժողը կը մն-  
լորի :  
18 Ատելութիւնը ծածկողը ստախօս շրթունք  
ունի ,  
Ու բամբասանք հանողը անմիտ է :  
19 Շատ խօսքերու մէջ յանցանք պակաս չէ .  
Բայց իր շրթունքները զսպողը խելացի է :  
20 Արդարին լեզուն ընտիր արծաթ է .  
Ամբարիշտներուն սիրտը քիչ արժէք ունի :  
21 Արդարին շրթունքները շատերուն առաջ-  
նորդութիւն կ'ընեն .  
Բայց յիմարները խելքի պակասութենէն կը  
մեռնին :  
22 Տէրով օրհնութիւնն է որ հարստութիւն  
կու տայ ,  
Ու անոր-հետ տրտմութիւն չխառներ :

- 23 Չարութիւնն ընելը յիմարին զրօսանքն է .  
Բայց խոհեմ մարդուն՝ իմաստութիւնը :
- 24 Չար մարդուն վախցած բանը իր վրայ կու  
գայ .  
Բայց արդարներուն փափազը կը լեցուի :
- 25 Մտրիկը անցնելուն պէս ամբարիշտը բնա-  
ջննջ կ'ըլլայ .  
Բայց արդարը յաւիտենական հիմն է :
- 26 Ինչպէս է քայտար պոսաներուն , և ծուխը  
աւքերուն ,  
Ծոյլն աւ զները իրկողներուն այնպէս է :
- 27 Տէրովը վախը օրեր կ'աւելցնէ .  
Բայց ամբարիշտներուն տարիները պիտի  
կարճընան :
- 28 Արդարներուն յոյսը ուրախութիւն է .  
Բայց ամբարիշտներուն ակնկալութիւնը պի-  
տի կորսուի :
- 29 Տէրովը ծամբան արդարին զօրութիւն է .  
Բայց անօրէնութիւն զօրծողներուն կործա-  
նում է :
- 30 Արդարը պիտի չսասանի յաւիտեան .  
Բայց ամբարիշտները երկրի վրայ պիտի չը-  
բնակին :
- 31 Արդարին բերանը իմաստութիւն կը բղխէ .  
Բայց նենդաւոր լեզուն պիտի կտրուի :
- 32 Արդարին շրթունքները հաճոյ բանը զիտեն ,  
Բայց ամբարիշտներուն բերանը փշն նեն-  
դութիւնն :

## ԳԼ . ԺԱ

- 1 Նենդութեան կշիռը Տէրովը առջևը պիղծ  
է .  
Բայց ուղիղ կնիքն քարը անոր հաճոյ է :
- 2 Երբոր հպարտութիւնը գայ, անարդութիւնն  
ալ կու գայ .

- Բայց իմաստութիւնը խոնարհներուն հետ է :
- 3 Ուղիղներուն շիտակութիւնը անոնց առաջ-  
նորդութիւն կ'ընէ .  
Բայց անօրէններուն ծուխը զանոնք  
բնաջննջ կ'ընէ :
- 4 Բարկութեան օրը հարստութիւնը օգուտ  
մը չըներ .  
Բայց արդարութիւնը մահուանէ կ'ազատէ :
- 5 Կատարեալներուն արդարութիւնը անոնց  
ճամբան կը շիտկէ .  
Բայց անիրաւը իր անիրաւութեամբը կ'էյ-  
նայ :
- 6 Ուղիղներուն արդարութիւնը զանոնք կ'ա-  
զատէ .  
Բայց անօրէնները իրենց չարութեանը մէջ  
կը բռնուին :
- 7 Երբոր չար մարդը մեռնի , աւոր ակնկալու-  
թիւնը կը կորսուի .  
Եւ անօրէններուն յոյսը կը կորսուի :
- 8 Արդարը նեղութենէ կ'ազատի ,  
Ու անոր տեղը ամբարիշտը կ'երթայ :
- 9 Կեղծաւորը բերնովը իր զբացին կը կործն-  
ցնէ .  
Բայց արդարները զիտութեամբ կ'ազատին :
- 10 Արդարներուն յաջողութեանը վրայ քաղա-  
քը կ'ուրախանայ .  
Ու երբոր չարերը կորսուին , ցնծութեան  
ձայն կը լսուի :
- 11 Ուղիղներուն օրջնութիւնովը քաղաքը կը  
բարձրանայ ,  
Բայց ամբարիշտներուն բերնովը կը կործանի :
- 12 Պակասամիտ երգը իր զբացին կ'արհամարհէ .  
Բայց խոջմ մարդը կը լռէ :
- 13 Բանօտարութեան պտըտողը գաղանձքը կը  
յայտնէ .

Բայց հաւատարիմ հոգի ունեցողը բանը կը ծածկէ :

14 Ժողովուրդը առանց խոհականութեան կը կործանի .

Բայց խորհրդականներու բազմութեամբ փրկութիւն կ'ըլլայ :

15 Օտարականին երաշխաւոր եղողը անշուշտ չարքի կը հանդիպի .

Բայց երաշխաւորութիւնը ատողը ապահով է :

16 Շնորհալի կնիկը պատիւ կը ստանայ .  
Եւ զօրաւոր մարդիկ հարստութիւն կը ստանան :

17 Ողորմած մարդը իր անձին աղէկութիւն կ'ընէ .

Բայց անողորմ մարդը իր մարմնոյն նեղութիւն կու տայ :

18 Ձար մարդը սնտի գործ կը զործէ .  
Բայց արդարութիւն ցանողը ապահով վարձք կ'ունենայ :

19 Ինչպէս որ արդարութիւնը կենաց Կարգընէն ,  
Նոյնպէս ալ չարութեան հետեւողը իր մահուանը կ'երթայ :

20 Ծուռ սիրտ ունեցողները Տերօջը առջևը պիղծ են .  
Բայց ուղիղ ճամբայ քարոզները անոր հաճոյ են :

21 Անօրէնները լէւ ձեռք ձեռքի Կարգընէն ,  
անպատիւ պիտի չմնան .  
Բայց արդարներուն սերունդը պիտի աղատի :

22 Գեղեցիկ կնիկը որ խոհեմութիւն չունի ,  
խողովն քիթը Կարգընէն օղակին կ'ընէ :

23 Արդարներուն ցանկութիւնը միայն բարութիւն է .

Բայց անօրէններուն ակնկալութիւնը բարկութիւն պիտի ըլլայ :

24 Մարդ կայ որ է Կարգընէն ցրուելով կ'աւելցընէ ,

Ու Կարգընէն որ չափէ զուրս կը խնայէ , բայց կարօտութեան կ'ընէ :

25 Բարեբար անձը պիտի զերնայ .  
Եւ ան որ կ'ողորմէ ինքն ալ պիտի ուղորմի :

26 Յորենը պահողին ժողովուրդը անէճք կու տայ .

Բայց զանկա ծախողին զլիտուն վրայ օրհնութիւն կ'ըլլայ :

27 Աղէկութեան համար փոյթ ունեցողը շնորհք կը ստանայ .

Բայց ով որ դէշութիւն կը փնտռէ , անկա իրեն պիտի հանդիպի :

28 Իր հարստութեանը վրայ յոյսը դնողը պիտի իյնայ .

Բայց արդարները կանանչ տերեւի պէս պիտի ծաղկին :

29 Իր տանը նեղութիւն տուողը հով պիտի ժառանգէ .

Ու յիմարը իմաստուն սիրտ ունեցողին ծառայ պիտի ըլլայ :

30 Արդարին պտուղը կենաց ծառ է .  
Եւ հողինըրը վատըրը իմաստուն է :

31 Ահա արդարը երկրի վրայ պատիւ կը կրէ .  
Ո՞ր մնաց ամբարիշտը ու մեղաւորը :

ԳԼ . ԺԲ

1 Խրատը սիրողը զիտութիւնը կը սիրէ .  
Ու յանդիմանութիւնը ատողը անմիտ է :

2 Բարի մարդը Տերօջմէ շնորհք կը ստանայ .  
Բայց Կարգընէն նեղաւոր մարդը պիտի դատապարտէ :

- 3 Մարդը անիրաւութեամբ հաստատութիւն չունենար .  
Բայց արդարներուն արմատը չչարժիր :
- 4 Առարինի կնիկը իր էրկանը պսակ է .  
Բայց նախատինք բերողը անոր ոսկորներուն մէջի փտութեանը պէս է :
- 5 Արդարներուն մտածութիւնները իրաւունք են .  
Բայց ամբարիշտներուն խորհուրդները նենգութիւն են :
- 6 Ամբարիշտներուն խօսքերը արիւնի համար դարան են .  
Բայց ուղեղներուն բերանը գերնք կ'ազատէ :
- 7 Ամբարիշտները կը կործանին ու բնաջինջ կ'ըլլան .  
Բայց արդարներուն տունը կը հաստատուի :
- 8 Մարդը իր խոհեմութեանը չափ կը գովուի .  
Բայց ծուռ սիրտ ունեցողը կ'անարգուի :
- 9 Անշլան մարդը՝ որ ծառայ ունի ,  
Զինքը մեծցնող ու հացի կարօտ եղողէն աղէկ է :
- 10 Արդարը իր անասուններուն կենացը համար հոգ կը տանի .  
Բայց ամբարիշտներուն աղբները անողորմ են :
- 11 Իր երկիրը գործողը հացով կը կշտանայ .  
Բայց դատարկ մարդոց հետեողը պակասափոտ է :
- 12 Ամբարիշտը չարերուն աւարին կը փափաքի .  
Բայց արդարներուն արմատը պտու կու տայ :
- 13 Չարը էր շրթունքներուն . յանցանքովը որդի պայծր կ'իյնայ .  
Բայց արդարը նեղութենէն կ'ելլէ :
- 14 Մարդը իր բերնին պտուղէն բարիքներով կը լեցուի .

- Ու մարդուն ձեռաց հատուցումը իրեն պիտի դառնայ :
- 15 Յիմարին ճամբան իր աչքերուն շտակ է .  
Բայց խրատ մտիկ ընողը իմաստուն է :
- 16 Յիմարը նոյն օրը կը յայտնէ իր բարկութիւնը .  
Բայց անարգանքը ծածկողը խելացի է :
- 17 Ճշմարտութիւն խօսողը արդարութիւն կը յայտնէ .  
Իսկ սուտ վկան՝ նենգութիւն :
- 18 Մորթի կան՝ որ իրենց շատախօսութեամբը սուրբի պէս կը խոցօտեն .  
Բայց իմաստուններուն լեզուն բժշկութիւն է :
- 19 Ճշմարտախօս շրթունքը միշտ հաստատ կը մնայ .  
Բայց ստախօս լեզուն վայրկենական է :
- 20 Չարութիւն մտածողին սրտին մէջը նենգութիւն կ'ըլլայ .  
Բայց խաղաղութեան համար խորհուրդը ընողները ուրախութիւն կ'ունենան :
- 21 Արդարին բնաւ չարիք չհասնիր .  
Բայց ամբարիշտները թշուառութիւններով կը լեցուին :
- 22 Սուտ շրթունքը Տէրոջը զգուելի է .  
Բայց հաւատարմութիւն ընողները անոր հաճոյ են :
- 23 Խօհեմ մարդը էր դիտցածը կը ծածկէ .  
Բայց յիմարներուն սիրտը յիմարութիւն կը հրատարակէ :
- 24 Ժիր մարդոց ձեռքը կ'իշխէ ,  
Ու ծոյլը հարկատու կ'ըլլայ :
- 25 Մարդուն սրտին մէջ եղող վեշտը զանիկա կը ծնէ .  
Բայց աղէկ խօսքը կ'ուրախացնէ զանիկա :

- 26 Արդարը իր ընկերին ճամբայ կը ցուցնէ .  
Բայց ամբարիշտներուն ճամբան զերեք կը  
մոլորցնէ :
- 27 Ծոյը իր որսը չեփեր .  
Բայց ժիր մարդուն ստացուածքը պատուա-  
կան է :
- 28 Արդարութեան ճամբուն մէջ կեանք կայ .  
Եւ անոր շահիղներուն ճամբուն մէջ մահ  
չկայ :

## ԳԼ . ԺԳ

- 1 Իմաստուն տղան իր Տօրը խրատը Բիլի Կնէ .  
Բայց ծաղը ընողը յանդիմանութիւնը մտիկ  
չընէ :
- 2 Մարդը իր բերնին պտուղէն բարութիւն  
կ'ուտէ ,  
Բայց անօրէններուն հողին՝ բռնութիւն .
- 3 Իր բերանը զսպողը իր անձը կը պահէ .  
Բայց շրթունքները լայն բացողը պիտի կոր-  
սուի :
- 4 Ծոյըն հողին կը ցանկայ ու բան մը չունի .  
Բայց ժրպան մարդոց հողին կը գերնայ :  
Սուտ խօսքը արդարին ստելի է .  
Բայց ամբարիշտը ամօթալից ու խայտա-  
ռակ վարք ունի :
- 6 Արդարութիւնը կատարելութեամբ քալող-  
ները կը պաշտպանէ .  
Բայց չարութիւնը մեղաւորները կը կործանէ :
- 7 Կան որ զերեքը հարուստ կը ցուցնեն ու բան  
մը չունին ,  
Եւ Իսրայէլի զերեքը աղքատ կը ցուցնեն ու  
չատ հարստութիւն ունին :
- 8 Մարդուն կենացը փրկանքը եր հարստու-  
թիւնն է .

- Բայց աղքատը յանդիմանութիւն չսեր :
- 9 Արդարներուն լոյսը զուարթ պիտի ըլլայ .  
Բայց ամբարիշտներուն ճրագը պիտի մարի :
- 10 Յիրաւի հպարտութենէ կուր կը ծաղի .  
Բայց խրատ մտիկ ընողներուն քովը իմաս-  
տութիւն կայ :
- 11 Անիրաւութեամբ Բիլի հարստութիւնը  
պիտի պակսի .  
Բայց էր աշխատութեամբը ժողովողը պիտի  
շատցնէ :
- 12 Ուշացած յոյսը սիրտը կը հիւանդացնէ .  
Բայց փափարին հասնիլը կենաց ծառ մըն է :
- 13 Խօսքը արհամարհողը պիտի կորսուի .  
Բայց պատուիրանքէն վախցողը վարձք պի-  
տի առնէ :
- 14 Իմաստունին օրէնքը կենաց աղբիւր է  
Մահուան որդայթներէն ազատ մնալու  
համար :
- 15 Բարի խոհեմութիւնը շնորհք կու տայ .  
Բայց անօրէններուն ճամբան դժուարին է :
- 16 Ամէն խելայի իմաստութեամբ կը գործէ .  
Բայց անմիտը յիմարութիւն կը տարածէ :
- 17 Չար պատգամաւորը թշուառութեան մէջ  
կ'իյնայ .  
Բայց հաւատարիմ՝ ղեկավարը բժշկու-  
թիւն է :
- 18 Խրատ անարգողը աղքատութիւն ու անար-  
գութիւն է Իսր .  
Բայց յանդիմանութիւն մտիկ ընողը պա-  
տիւ կը գտնէ :
- 19 Փափաղին կատարուիլը հողին անոյլ է .  
Ու չարազօրծութենէ կու կենալը յիմարնե-  
րուն զգուելի է :
- 20 Իմաստուններուն հետ քալողը իմաստուն  
կ'ըլլայ .

- Բայց անմիտներուն հետ ընկերացողը չար կ'ըլլայ :
- 21 Մեղաւորներուն ետեւէն ձախորդութիւն կ'երթայ .  
Բայց արդարներուն բարիք կը հատուցուի :
- 22 Բարի մարդը իր որդւոցը որդիներուն ժառանգութիւն կը թողու .  
Բայց մեղաւորին ստացուածքը արդարին համար կը պահուի :
- 23 Աղքատներուն մշակած երկրին մէջը շատ ուտելիք կայ .  
Բայց Ժողովայ որ անիրաւութենէ կը կորսուի :
- 24 Գաւազանին խնայողը իր որդին կ'ատէ .  
Բայց զանիկա սիրողը կանուխկեկ կը խրբատէ :
- 25 Արդարը մինչև իր անձին կշտանալը կ'ուտէ .  
Բայց ամբարիշտներուն փորը կարօտութիւն պիտի քաշէ :

ԳԼ. ԺԴ

- 1 Իմաստուն կնիկները իրենց տունը կը շինեն .  
Բայց յիմար կնիկը զանիկա իր ձեռքովը կը փլցընէ :
- 2 Իր ուղղութեանը մէջ քայլող Յերոմէ կը վախնայ .  
Բայց ծուռ ճամբայ ունեցողը զանիկա կ'անարգէ :
- 3 Յիմարին բերանը հպարտութեան դաւազան կայ .  
Բայց իմաստուններուն շրթունքները զերնիք կը պահեն :
- 4 Ուր որ արջառ չկայ, մնուրը մաքուր կը մնայ .

- Իսկ արդիւնքին առատութիւնը եղին զօրութենէն առաջ կու դայ :
- 5 Ճշմարտութեան վկան սուտ չխօսիր .  
Բայց անիրաւ վկան ստութիւններ կը թափէ քէքէնէն :
- 6 Ծաղը ընողը իմաստութիւն կը փնտռէ ու չգտներ .  
Բայց իմաստուններուն համար զիտութիւնը զիւրին է :
- 7 Յիմար մարդէն հեռացիր,  
Իբրոր կ'իմանաս որ իմաստուն շրթունքներ չունի :
- 8 Խելացի մարդուն իմաստութիւնը իր ճամբան հասկընայն է .  
Բայց յիմարներուն անմտութիւնը նենգութիւն է :
- 9 Յիմարները յանցանքը ծաղը կ'ընեն .  
Բայց ուղիղներուն մէջը ներողամտութիւն կայ :
- 10 Մարդուն սիրտը իր հոգիին ցաւը կը ճանչնայ .  
Ու անոր ուրախութեանը ուրիշը մասնակից չըլլար :
- 11 Ամբարիշտներուն տունը պիտի կործանի .  
Բայց ուղիղներուն վրանը պիտի ծաղկի :
- 12 Ճամբայ կայ որ մարդուն շիտակ կ'երենայ,  
Բայց անոր վախճանը մահուան ճամբաներն է :
- 13 Ծիծաղելու տունն ալ Ժողովայ սիրտը տըրտմութիւն կը զգայ,  
Իւ ուրախութեան վախճանը սուգ կ'ըլլայ :
- 14 Ապականած սիրտը իր ճամբաներէն  
Ու բարի մարդը ինքիրմէն պիտի կշտանայ :
- 15 Միամիտ մարդը ամէն խօսքի կը հաւատայ .  
Բայց խելացին իր քայլերը կը քննէ :

- 16 Իմաստունը կը վախնայ ու չարութենէ կը փախչի .  
Բայց անմիտը կը հպարտանայ ու յանձնապատան կ'ըլլայ :
- 17 Շուտ բարկացողը յիմարութիւն կ'ընէ .  
Ու նենգամիտ մարդը ատելի է :
- 18 Անխոհմէտը անմտութիւն կը ժառանգեն .  
Բայց խելացիները զիտութեամբ կը պսակուին :
- 19 Չարերը բարիներուն առջևը կը խոնարհին ,  
Եւ ամբարիշտները արդարներուն դրանք քովը :
- 20 Աղքատը մինչև անգամ իր ընկերին ատելի է .  
Բայց հարուստին բարեկամները շատ են :
- 21 Իր ընկերը անարդողը մեղք կը գործէ .  
Բայց աղքատին ողորմութիւն ընողը երանելի կ'ըլլայ :
- 22 Ահա չարութիւն մտածողները կը մոլորին .  
Բայց բարութիւն մտածողներուն ողորմութիւն ու ճշմարտութիւն կ'ըլլայ :
- 23 Ամէն աշխատանքի մէջ օգուտ մը կայ .  
Բայց դատարկամտութիւնը միայն կա օտութեան իւր արժէքը :
- 24 Իմաստուններուն հարստութիւնը իրենց պըսակն է .  
Բայց անմիտներուն բարձրութիւնը յիմարութիւն է :
- 25 Հաւատարիմ վկան հոգիներ կ'ազատէ .  
Բայց խարդախը ստութիւններ դուրս կուտայ :
- 26 Տէրոջը վախին մէջ հաստատ վստահութիւն կայ .  
Ու անոր որդիքը ապաւէն պիտի ունենան :
- 27 Տէրոջը վախը կենաց աղբիւր է՝  
Մահուան որդայթիւներէն ազատ մնալու համար :

- 28 Ժողովուրդին բազմութիւնը թագաւորին պատիւն է .  
Բայց ժողովուրդին նուազութիւնը իշխանին կործանումն է :
- 29 Երկայնամիտ մարդը շատ խոհեմ է .  
Իսկ կարճամիտը շատ յիմարութիւն կ'ընէ :
- 30 Հանդարտ սիրտը մարմնոյն կենսք է .  
Բայց նախանձը ոսկորներուն փտութիւն է :
- 31 Աղքատին զրկանք ընողը անոր Ստեղծիչը կ'անարդէ .  
Բայց տնանկիւն ողորմութիւն ընողը զԱնիկա կը պատէ :
- 32 Ամբարիշտ իր չարութեանը համար կը վաւերտուի .  
Բայց արդար իր մահուան ատենը կ'ուռնայ :
- 33 Խելացի մարդուն սրտին մէջ իմաստութիւն կը հանդէս .  
Իսկ յիմարութեան ներսը եղածը կը ճանցուի :
- 34 Արդարութիւնը ազդը կը բարձրացրնէ .  
Բայց մեղքը ժողովուրդներուն անարգանք է :
- 35 Խոհեմ ծառային՝ թագաւորը կը հաճի .  
Բայց նախատիքը բերողը քուսնի կը բարկանայ :

ԳԼ . ԺԵ

- 1 Մեղմ պատասխանը սրտմտութիւնը կ'իջեցրնէ .  
Բայց խիստ խօսքը բարկութիւնը կը դրդուէ :
- 2 Իմաստուններուն լեզուն զիտութիւնը հաճոյ կ'երեցրնէ .  
Բայց անմիտներուն բերանը յիմարութիւն կը բղխէ :
- 3 Տէրոջը աչքերը ամէն տեղ  
Չարերը ու բարիները կը դիտեն :

- 4 Խաղաղասեր լեզուն կենաց ծառ է .  
Բայց խռովարար լեռն սիրտ կը կտորէ :
- 5 Յիմարը իր հօրը խրատը կ'անարդէ .  
Բայց յանդիմանութեան հնազանդողը խելացի կ'ըլլայ :
- 6 Արդարին տունը մեծ գանձ կայ .  
Բայց ամբարշտին եկամուտներուն մէջը խռովութիւն կայ :
- 7 Իմաստուններուն շրթունքները դիտութիւն կը տարածեն .  
Բայց յիմարներուն սիրտը այնպէս չէ :
- 8 Ամբարիշտներուն զոհը Տէրոջը առջևը պիղծ է .  
Բայց ուղիներուն աղօթքը անոր ընդունել է :
- 9 Տէրը ամբարշտին ճամբայէն կը զզուի ,  
Բայց արդարութեան հետեղը կը սիրէ :
- 10 Ուղի ճամբան մերժողին դէշ պատիժ ! չէլէլ .  
Ու յանդիմանութիւնը ատողը պիտի մեռնի :
- 11 Դժուքը ու կորուստը Տէրոջը առջևն է .  
Որչափ աւելի մարդոց որդիներուն սիրտերը :
- 12 Ծաղը ընողը իր յանդիմանիչը չսիրէ ,  
Եւ իմաստուններուն քովը չերթար :
- 13 Ուրախ սիրտը երեսը կը զուարթացընէ .  
Բայց սրտին տրտմութենէն հողին կը ճընշուի :
- 14 Հանձարեղ սիրտը դիտութիւն կը փնտռէ .  
Բայց անմիտներուն բերանը յիմարութեամբ կը սնանի :
- 15 Վշտալից մարդուն ամէն օրերը դէշ են .  
Բայց ուրախ սիրտը մշտնջենաւոր կոչուների մէջ է :
- 16 Աւելի աղէկ է քիչ բանը Տէրոջը վախովը ,  
Քան թէ մեծ գանձը՝ խռովութիւնով :

- 17 Աւելի աղէկ է սէր եղած տեղը խոտեղէն կերակուրը ,  
Քան թէ դէր զուարակը՝ ատելութիւնով :
- 18 Բարկասիրտ մարդը վէճ կը հանէ .  
Բայց երկայնամիտը կռիւր կը դադրեցընէ :
- 19 Ծոյլին ճամբան փշեղէն ցանկի պէս է .  
Բայց ուղիներուն ճամբան բանուկ է :
- 20 Իմաստուն տղան իր հայրը կ'ուրախացընէ .  
Բայց անմիտ մարդը իր մայրը կ'անարդէ :
- 21 Պակասամիտ մարդուն՝ յիմարութիւնը զրոսանք է .  
Բայց իմաստուն մարդը կ'ուղղէ իր ընթացքը :
- 22 Աւանց խորհուրդի դիտաւորութիւնները կը ցրուին .  
Բայց խորհրդականներուն շատութիւնովը կը հաստատուին :
- 23 Մարդը իր բերին պատասխանովը կ'ուրախանայ .  
Ու ատենովը ըսուած խօսքը որչափ դեղեցիկ է :
- 24 Կենաց ճամբան խոհեմ մարդը դէպ 'ի վեր չը քաշէ ,  
Որ վարի դժոխքէն հեռանայ :
- 25 Տէրը հպարտներուն տունը կը կործանէ ,  
Բայց որբեարիին սահմանը կը հաստատէ :
- 26 Չար մարդուն խորհուրդները Տէրոջը առջևը պիղծ են .  
Բայց պարկեշտներուն խօսքերը հաճելի են :
- 27 Ազահութեան անձնատուր եղողը իր տունը խռովութեան մէջ կը ձգէ .  
Բայց կաշառքներէ զզուողը պիտի ապրի :
- 28 Արդարին սիրտը՝ տալու պատասխանը կը մտածէ .  
Բայց ամբարիշտներուն բերանը չարիք կը բղխէ :

- 29 Տէրը ամբարիշտներէն հեռու է ,  
Բայց արդարներուն աղօթքը կը լսէ :
- 30 Աչաց լոյսը սիրտը կ'ուրախացնէ .  
Բարի լուրը ոսկորները կը զիջցընէ :
- 31 Կենաց յանդիմանութիւնը լող ազանջը  
Իմաստուններուն մէջ կը ընակի :
- 32 Խրատ մերժողը իր հոգին կ'անարգէ .  
Բայց յանդիմանութիւն մտիկ ընողը խելք  
կը վաստակի :
- 33 Տէրոջը վախը իմաստութեան խրատն է ,  
Ու փառաց առջևէն խոնարհութիւնը ! Ի՛րբէ՛ս :

ԳԼ ԺԶ

- 1 Սրտին տրամադրութիւնները մարդուն իջ  
վէրբէրին .  
Բայց լեզուին պատասխանը Տէրոջմէն է :
- 2 Մարդուն ամէն ճամբաները իրեն մարուր  
կ'երևանան .  
Բայց Տէրը հոգիները կը կշռէ :
- 3 Քու գործքերդ Տէրոջը յանձնէ ,  
Եւ քու խորձարդներդ պիտի հաստատուին :
- 4 Տէրը ամէն բան իր նպատակին համար ըս-  
տեղծեց ,  
Ու ամբարիշտն ալ ձախողը օրուան համար :
- 5 Ամէն սրտով Հպարտները Տէրոջը առջևը  
պիղծ են ,  
Ու Բէ՛ւ ձեռք ձեռքի քուլով փոքրէին , ան-  
պատիժ պիտի չմանն :
- 6 Ողորմութեամբ և ճշմարտութեամբ անօրե-  
նութիւնը կը քառուի ,  
Ու Տէրոջը վախովը Խո՛րջ չարութենէ կը  
հեռանայ :
- 7 Երբոր Տէրը մարդուն ճամբաներուն կը հաճի,  
Մինչև անգամ անոր թշնամիները կը հաշ-  
տեցնէ անոր հետ :

- 8 Աղէկ է քիչ բան արդարութեամբ ,  
Քան թէ մեծ եկամուտներ անիրաւութեամբ :
- 9 Մարդուն սիրտը իր ճամբան կը հնարէ .  
Բայց անոր քայլերը Տէրը կ'ուղղէ :
- 10 Թագաւորին շրթունքներուն վրայ աստուա-  
ծային ազդեցութիւն կայ .  
Անոր բերանը դատաստանի մէջ չսխալիր :
- 11 Ուղիղ կշռողը և կշիւքը Տէրոջն է .  
Մախողին ամէն կէտէ բարերը անոր դործ-  
քն են :
- 12 Չարագործութիւնը թագաւորներուն զըզ-  
ուելի է .  
Վասն զի ամբողջ արդարութեամբ կը հաս-  
տատուի :
- 13 Արդար շրթունքները թագաւորներուն հա-  
ձելի են ,  
Ու շիտակ խօսողը կը սիրեն :
- 14 Թագաւորին բարութիւնը մահուան դես-  
պաններու ղեկ է .  
Բայց իմաստուն մարդը զանիկա կ'իջեցընէ :
- 15 Թագաւորին երեսին լոյսը կեանք է ,  
Ու անոր հաճութիւնը վերջի անձրեւին ամ-  
պին պէս է :
- 16 Իմաստութիւն ստանալը ոսկիէն որչափ ա-  
ղէկ է ,  
Եւ հանձար վաստակիլը արծաթէն աւելի  
ընտիր է :
- 17 Ուղիղներուն մեծ ճամբան չարութենէ հրա-  
ժարիլն է .  
Իր ճամբուն զդուշութիւն ընողը իր հոգին  
կը պահէ :
- 18 Կոտորածին առջևէն հպարտութիւն ,  
Ու կործանման առջևէն ամբարտաւանու-  
թեան ոգին ! Ի՛րբէ՛ս :
- 19 Խոնարհներուն հետ խոնարհ ըլլալը՝

Հ պարտներուն հետ աւար բաժնէլէն աղէկ է :

20 Գործքի մէջ խելացութեամբ վարուողը բարիք կը գտնէ .

Ու Տէրոջը ապաւինողը երանելի է :

21 Իմաստուն սիրտ ունեցողը խոհեմ կ'ըսուի .  
Եւ շրթանց քաղցրութիւնը զիտութիւն կ'աւելցընէ :

22 Խոհեմութիւնը՝ ունեցողին կենաց աղբիւր է .  
Բայց յիմարներուն խրատը յիմարութիւն է :

23 Իմաստունին սիրտը իր բերնին իմաստութիւն կու տայ ,

Ու իր շրթունքներուն զիտութիւն կ'աւելցընէ :

24 Ա այե՛րուչ խօսքերը մեղրի խորիսխին պէ՛տ է .  
Հողիին քաղցր ու ոսկորներուն բժշկութիւն է :

25 Ճամբայ կայ որ մարդուն շտակ կ'երենայ ,  
Բայց անոր վախճանը մահուան ճամբաներն է :

26 Աշխատող անձը իրեն համար կ'աշխատի .  
Քանզի իր բերանը կը պահանջէ իրմէ :

27 Անօրէն մարդը չարութիւն կը փորէ ,  
Ու անոր շրթունքներուն վրայ իբր թէ այրող կրակ մը կայ :

28 Ծուռ մարդը կուի կը հանէ ,  
Եւ քուն մտերիմ բարեկամները կը զատէ :

29 Անօրէն մարդը իր ընկերը կը խաբէ ,  
Ու զանիկա գէշ ճամբաներ կը տանի .

30 Անեղութիւններ մտածելու համար աչքերը կը դոցէ ,  
Եւ շրթունքները խաճնելով չարութիւնը կը կատարէ :

31 Մաղի ձերմութիւնը փառաց պսակ է ,  
Թէ որ անիկա արդարութեան ճամբուն մէջ դանուի :

32 Երկայնամիտ մարդը հզօր մարդէն աղէկ է ,  
Ու իր ողին զսպողը՝ քաղաք առնողէն :

33 Ախճակը ծոցը կը ձգուի ,  
Բայց անոր ամէն կարգադրութիւնը Տէրոջմէ է :

Գ Լ Ժ Ե

1 Աղէկ է պատառ մը չոր հոյ խաղաղութիւնով ,

Քան թէ տուն մը լեցուն զոհեր՝ կուիով :

2 Խոհեմ ծառան նախատիք բերող որդիին կ'իշխէ ,

Ու եղբարց մէջ ժառանգութեան բաժին կ'առնէ :

3 Արծաթի համար հալոց և ոսկիի համար քուրայ կայ .

Բայց սիրտերը փորձողը Տէրն է :

4 Չար մարդը անիրաւին շրթանցը մտիկ կ'ընէ ,  
Ու ստախօսը փնասակար լեզուին սկանջ կը դնէ :

5 Աղքատը ծաղր ընողը անոր Ստեղծիչը կ'անարգէ ,

Եւ ձախորդութեան վրայ ուրախացողը անպատիժ պիտի չմնայ :

Որդւոց որդիները ձերերուն պսակն է ,  
Եւ որդւոց պարծանքը իրենց հայրերն են :

7 Ընտիր խօսքը անզգամին չվայլեր .  
Որչափ աւելի ստախօս շրթունքը՝ աղնուականին :

8 Պարզեւ՝ զործածողին առջևը պատուական զոհարի պէս է ,

Ուր որ դառնայ՝ յարողութիւն կը դտնէ :

9 Յանցաւոր ծածկողը բարեկամութիւն կը փնտռէ .

- Բայց զանիկա պատմողը մտերիմ՝ բարեկամ ներք կը դասէ :
- 10 Խոհեմ մարդուն աւելի կ'ազդէ զի՛ յանդիմանութիւնը ,  
Քան թէ՛ հարիւր զոտոտի՛ հարուած՝ յիմարին :
- 11 Չոր մարդը միշտ ապստամբութիւն կը փընտըռէ ,  
Ու անոր խիստ պատգամաւոր կը խրկուի :
- 12 Ալ աղէկ է ձագերը զողջուած արջուն առջևը ելլել ,  
Քան թէ՛ յիմարի մը՝ անոր յիմարութեան առեւեր :
- 13 Ով որ աղէկութեան փոխարէն չարիք կը հատուցանէ ,  
Չարիքը անոր տունէն պակաս պիտի չըլլայ :
- 14 Կռիւի սկզբնաւորութիւնը ջուրին արձակմանը կը նմանի .  
Ուրեմն վէճը չբռնկած՝ ետ քաշուէ :
- 15 Ամբարիշտը արդարացընողը՝ և արդարը ամբարիշտ հանողը՝  
Երկուքն այ Յէրոջը առջևը պիտի են :
- 16 Իմաստութիւնը ծախու առնելու դինը ի՞նչ օգուտ ունի յիմարին ձեռքը ,  
Որովհետեւ խելք չունի :
- 17 Բարեկամը ամէն ատեն կը սիրէ ,  
Ու եղբայրը նեղութեան ոտի՛ն համար ծընած է :
- 18 Պակասամիտ մարդը ձեռքը կու տայ ,  
Ու իր բարեկամին համար երաշխաւոր կ'ըլլայ :
- 19 Կռիւ սիրողը յանցանք կը սիրէ .  
Իր դուռը բարձրացընողը էր՝ կործանոււմը կը փնտռէ :
- 20 Ծուռ սիրտ ունեցողը աղէկութիւն չգտներ ,

- Ու ննջաւոր լեղուով մարդը չարիքի մէջ կ'ընայ :
- 21 Յիմարը ծնանողը սրտմութիւն կը կրէ ,  
Եւ անզգամին հայրը չուրախանար :
- 22 Ուրբախ սիրտը դեղի պէս օգտակար է .  
Բայց կոտրած սիրտը սկոբները կը չորցընէ :
- 23 Անօրէն մարդը ոտի՛ն ծոցէն կաշառք կ'առնէ ,  
Որ արարութեան ճամբաները ծռէ :
- 24 Իմաստութիւնը խոհեմ մարդուն առջևն է .  
Բայց յիմարին աչքերը երկրին ծայրերն են :
- 25 Յիմար տղան՝ իր հօրը սրտմութիւն  
Ու զենքը ծնանողի դասնութիւն կ'ըլլայ :
- 26 Աղէկ չէ արդարէն տուգանք առնելը ,  
Ու չիշխանները ծեծելը՝ իրաւունքը ոտի՛ն համար :
- 27 Իր խօսքերը զսպողը իմաստուն է ,  
Ու երկայնամիտ մարդը հանձարեղ է .
- 28 Յիմարը անգամ թէ՛ որ լուռ կենայ , իմաստուն՝  
Ու իր շրթունքները դողողը հանձարեղ կը սեպուի :

ԳԼ . ԺԸ

- 1 Ինքնահաճոյ մարդը էր՝ ցանկութիւնը կը փնտռէ  
Եւ ամէն խորհուրդի դէմ կը կենայ :
- 2 Յիմարը խոհեմութենէ չախորժեր ,  
Հապա իր սրտին զէլ էլ ո՛չը յայտնել չ'ուզէ :
- 3 Երբոր ամբարիշտը զայ , անարգութիւն ալ կու գայ ,  
Ու նախատիքի հետ խայտառակութիւն :
- 4 Մարդուն բերնին խօսքերը խորունկ ջուրեր են .

Իմաստութեան արդիւրը առատարուղիս դէտ  
է :

5 Դատաստանի մէջ արդարը սուտ հանելու  
համար՝

Ամբարշտին աչառութիւն ընելը աղէկ չէ :

6 Անմիտ մարդուն շրթունքները կռիւի մէջ  
կը մտնեն ,

Ու անոր բերանը ծեծը կը կանչէ :

7 Անմիտ մարդուն բերանը իրեն կործանում է ,  
Եւ անոր շրթունքները իր անձին սրողայթ  
է :

8 Քսու մարդուն խօսքերը քաղցր պատառ-  
ներու պէս են ,

Ու անոնք մինչև փորին շտեմարանները կ'իջ-  
նեն :

9 Ան որ իր գործքին մէջ թոյլ է ,

Շուայլ մարդուն եղբայրն է :

10 Տէրոջը անունը ամուր աշտարակ է .

Արդարը անոր կը դիմէ , ու ապահով ապաս-  
տանարան կ'ունենայ :

11 Հարուստին ստացուածքը իր ամուր քա-  
ղաքն է ,

Ու անոր երևակայութեանը մէջ բարձր բեր-  
դի պէս է :

12 Կոտորածէն առջև մարդուն սիրտը կը հը-  
պարտանայ .

Բայց փտաց առջևէն խոնարհութիւնը  
կ'երևայ :

13 Ով որ բռն չը զսած պատասխան կու տայ ,  
Յիմարութիւն ու նախատինք է անոր :

14 Մարդուն հոգին իր հիւանդութեանը կը համ-  
բերէ .

Բայց վերաւորուած հոգին ո՞վ կրնայ մտի-  
թարել :

15 Խոհեմին սիրտը զիտութիւնը կը վատարկի .

Եւ իմաստուններուն ականջը զիտութիւն  
կը փնտռէ :

16 Մարդուն ընծան անոր ճամբայ կը բանայ ,  
Ու զանիկա մեծերուն առջևը կը տանի :

17 Իր դատը առաջ սկսողը իրաւունք ունեցող  
չը սեղանի .

Բայց երբոր իր ստիւր դայ՝ զանիկա կը քննէ :

18 Վիճակը վէճերը կը դարկեցընէ ,

Ու զօրաւորներուն մէջտեղը որոշում կ'ընէ :

19 Վշտացած եղբայր մը ամուր քաղաքէն առ-  
ւել է .

Եւ առաջ վէճերը բերդի մը նիզերուն կը նը-  
մանին :

20 Մարդ իր բերնին պտուղէն իր փորը կը կըշ-  
տացընէ ,

Ու իր շրթունքներուն արդիւնքէն կը կշտա-  
նայ :

21 Մահը ու կեանքը լեղուին ձեռքն է ,  
Եւ զանիկա սիրողները անոր պտուղը կ'ու-  
տեն :

22 Առաջին կնիկ գտնողը բարիք կը գտնէ ,  
Ու Տէրոջմէն շնորհք մը կը ստանայ :

23 Աշքատը աղաչելով կը խօսի ,  
Բայց հարուստը խիտ պատասխան կու տայ :

24 Բարեկամներ ունեցող մարդը բարեկամու-  
թիւն ընելու է .

Ու եղբորմէ աւելի հաստատ բարեկամ կայ :

ԳՂ. ԺԹ

1 Իր կատարելութեանը մէջ քալող աղբարը  
նենդաւոր շրթունք ունեցող յիմարէն ա-  
ղէկ է :

2 Հոգիին տգիտութիւնը աղէկ չէ ,  
Ու սոքերովը արտորացողը կը սահի :

- 3 Մարդուն յիմարութիւնը անոր ճամբան կ'աւրէ ,  
Եւ անոր սիրտը Տէրոջը դէմ տրտունջ կ'ընէ :
- 4 Հարստութիւնը շատ բարեկամներ կ'աւելցընէ .  
Բայց աղքատը իր բարեկամն կը զատուի :
- 5 Սուտ վկան անպարտ պիտի չմնայ ,  
Ու ստութիւններ խօսողը պիտի չազատի :
- 6 Շատերը առատաձեռն մարդուն հաճութիւնը կը փնտռեն ;  
Ու ամէն մէկը պարզեատու մարդուն բարեկամ կ'ըլլայ :
- 7 Աղքատին բոլոր եղբայրները անկէ կը զըզուին .  
Անոր բարեկամները՝ ալ աւելի անկէ կը հեռանան .  
Անիկա ոչինչ խօսքերու ետեւէ կ'իյնայ :
- 8 Խելք վաստակողը իր հողին կը սիրէ .  
Իմաստութիւն պահողը բարիք պիտի գտնէ :
- 9 Սուտ վկան անպարտ պիտի չմնայ ,  
Ու ստութիւններ խօսողը պիտի կորուսուի :
- 10 Յիմարին փափկութիւն չլլայլեր .  
Որչափ աւելի ծառայի մը՝ իշխաններու վրայ իշխել :
- 11 Մարդուն խոհեմութիւնը անոր բարկութիւնը կը զպէ ,  
Եւ յանցանք ներելը անոր պարծանք է :
- 12 Թաղաւորին բարկութիւնը առողջ առիւծի մտելունին կը նմանի ,  
Իսկ անոր հաճութիւնը խոտի վրայի ցօղին պէս է :
- 13 Անմիտ տղան իր հօրը թշուառութիւնն է ,  
Ու կնկան կռիւները շարունակ կաթ իններու դէնն .
- 14 Տունը ու ստացուածքը հայրերէն հողաշրջառանգութիւնն է .

- Բայց խոհեմ կնիկը Տէրոջմէ է :
- 15 Ծուլութիւնը խորունկ քուն կը բերէ ,  
Եւ թոյլ մարդը անօթի կը մնայ :
- 16 Պատուիրանքը պահողը իր հողին կը պահէ .  
Իր ճամբաները անարդողը պիտի մեռնի :
- 17 Աղքատին ողորմութիւն ընողը Տէրոջը փոխ կու տայ ,  
Ու անիկա անոր հատուցում պիտի ընէ :
- 18 Քանի որ յոյս կայ՝ տղադ խրատէ ,  
Եւ անոր մահուանը կամակից մի ըլլար :
- 19 Խիտ բարկացող մարդը փաս կը կրէ .  
Վասն զի թէ որ ունի՞մ է՞ աղատես նորէն ընելու ես :
- 20 Խրատը լսէ և կրթութիւնը ընդունէ ,  
Որ քու ետքի ատենդ իմաստուն ըլլաս .
- 21 Մարդուն սրտին մէջը շատ դիտաւորութիւններ կան ,  
Բայց Տէրոջը խորհուրդը հաստատուն պիտի մնայ :
- 22 Մարդուն ողորմածութիւնը իր փառքն է .  
Ու աղքատը ստախօսէն աղէկ է :
- 23 Տէրոջը երկիւղը կենաց դարձնու է ,  
Եւ զանչառ ունեցողը կուշտ կը պառկի , ու ձախորդութեան չհանդիպիր :
- 24 Ծոյլը իր ձեռքը ամանին մէջը կը խօթէ ,  
Ու զանիկա իր բերանը անգամ չզարձընէր :
- 25 Ծաղը ընողը ծեծէ , ու միամիտը խելացի կ'ըլլայ ,  
Եւ թէ որ իմաստունը յանդիմանես՝ հանձարը կը հասկընայ :
- 26 Իր հայրը կործանողը ու՝ էր մայրը վերնտողը Ամօթ ու նախատինք բերող տղայ մըն է :
- 27 Որդեակ իմ , ետ կեցիր ան խրատը մտիկ ընէլէն ,

- Որ <sup>1</sup> Իմաստութեան խօսքերէն կը խոտոր-  
ցնէ :
- 28 Չար վկան արդարութիւնը ծաղր կ'ընէ ,  
Ու ամբարիշտներուն բերանը անիրաւութիւն  
կը կլկէ :
- 29 Ծաղր ընողներուն համար դատաստաններ՝  
Եւ անմիտներուն կոնակին համար ծեծեր  
պատրաստուած են :

ԳԼ Ի

- 1 Գինին ծաղր ընող է , \* ցբին կոխ հանող ,  
Եւ ով որ ասոնց անձնատուր կ'ըլլայ՝ իմաս-  
տուն չըլլար :
- 2 Թաղաւորին աջը առողջ առիւծի մոնչիւ-  
նին պէս է ,  
Ու զանիկա բարկացընողը իր անձին վնաս  
կ'ընէ :
- 3 Կռիւէն ետ կենալը մարդուն փառք է .  
Բայց ամէն յիմար կռուասէր է :
- 4 Ծոյլը՝ Չմեռ է շէտէ , գէորէն չհերկեր .  
Ուստի հունձքի ատենը պիտի մուրայ , ու  
բան մը պիտի չունենայ :
- 5 Մարդու մը սրտին մէջի խորհուրդը խորունկ  
ջուրերու դէմ է .  
Բայց խելացի մարդը զանիկա կը հանէ :
- 6 Մարդոցմէ շատերը իրենց բարբարութիւնը  
կը հրատարակեն .  
Բայց հաւատարիմ մարդ մը ո՞վ կրնայ զբա-  
նել :
- 7 Իր անարատութեանը մէջ քայլող արդար է .  
Անոր որդիները իր ետեւէն երջանիկ պիտի  
ըլլան :
- 8 Դատաստանի աթոռը նստող թաղաւորը  
Իր աչքերովը ամէն չարիքը կը ցրուէ :

- 9 Ո՞վ կրնայ ըսել թէ Իմ սիրտս սրբեցի ,  
Իմ մեղքէս մաքրուեցայ :
- 10 Երկու տեսակ կէտէքար , երկու տեսակ  
չափ  
Հաւասարապէս Տերօջը առջըը պիղծ են :
- 11 Մինչև անցամ՝ աղու մը վարբին մաքրու-  
թիւնը և ուղղութիւնը  
Անոր գործքերէն կը հասկըցուի :
- 12 Լսող ականջը ու տեսնող աչքը՝  
Երկուքն այ Տէրը ստեղծեր է :
- 13 Քունը մի սրբը որ չըլլայ թէ աղբատանաս .  
Աչքերը քայ որ հայտը կշտանաս :
- 14 Ծախու առնողը Գէշ է , զէշ է՝ կ'ըսէ .  
Բայց երբոր երթայ՝ անատները կը պարծենայ :
- 15 Ոսկի ու շատ դո՛հար կը գտնուի .  
Բայց զիտութեան շրթունքները մեծադին  
զարդեր են :
- 16 Օտարականի մը երաշխաւոր եղողին զգեստը  
առ ,  
Եւ օտար կնկան համար երւէիւսը եղւէն  
զբաւ առ :
- 17 Ստութեան հացը մարդուն ախորժելի է ,  
Բայց ետքը անոր բերանը խիճով պիտի լե-  
ցուի :
- 18 Դիտաւորութիւնը խորհրդով կը հաստա-  
տուի .  
Ուստի խոհեմութեամբ պատերազմ քրէ :
- 19 Բանասերկութեան պտըտողը զաղտնիքը կը  
յայտնէ .  
Ուրեմն շրթունքներովը շողբորթութիւն  
ընողին հետ հաղորդակցութիւն մի ը-  
ներ :
- 20 Ով որ իր հայրը ու մայրը կ'անիծէ ,  
Անոր ծրարը մութ խաւարի մէջ պիտի մա-  
րի :

- 21 Կայ ժառանգութիւն՝ որ սկիզբը արտորնօք կ'առնուի :
- Բայց անոր վերջը պիտի չօրհնուի :
- 22 Չարութեան փոխարէնը հատուցանեմ՝ մի բանը .
- Տէրոջը սպասէ, ու անիկա բեղ պիտի ազատէ :
- 23 Երկու տեսակ չէրո՛ւք քարը Տէրոջը առջևը պիղծէ,
- Ու նեղաւոր կշեռքը աղէկ է :
- 24 Մարդուն քայլերը Տէրոջմէն է .
- Ուտի մարդը իր ճամբան ի՞նչպէս հասկընայ :
- 25 Անխորհրդարար բան մը նուիրելը, և ուխտ ընկէն ետքը քննութիւն ընելը
- Մարդուն որոգայթ մըն է :
- 26 Իմաստուն թագաւորը ամբարիշտները կը ցրուէ,
- Ու անիւր անոնց վրայ կը դարձնէ :
- 27 Մարդուն հոգին Տէրոջը լոյսն է,
- Սրտին բոլոր շտեմարանները կը քննէ :
- 28 Ողորմութիւնը ու ճշմարտութիւնը թագաւորը կը պահեն .
- Անիկա ալ իր աթոռը ողորմութեամբ կը հաստատէ :
- 29 Երեսասարդներուն զարդը անոնց ոյժն է,
- Եւ ծերոց փառքը պէտրութիւնն է :
- 30 Վէրքի նշանները ու փորի շտեմարանները հասնող հարուածները
- Չար մարդուն մաքրողական դեղ են :

ԳԼ ԻԱ

- 1 Թագաւորին սիրտը ջուրի վտակներու դէմ է Տէրոջը ձեռքին մէջ,

- Չանիկա որ կողմը ուղէ կը դարձնէ :
- 2 Մարդուն ամէն ճամբան իրեն ուղիղ կ'ընայ,
- Բայց Տէրը սիրտերը իր կշռէ :
- 3 Արդարութիւն և իրաւունք դործելը
- Ձոհէն աւելի ընդունելի է Տէրոջը :
- 4 Աչաց ամբարտաւանութիւնը և սրտի հպարտութիւնը
- Եւ մարաշտայ լըյսը մեղք է :
- 5 Աշխատասէր մարդուն խորհուրդները միայն առատութիւն չէ բերէն .
- Բայց ամէն արտորացող միայն կարօտութիւն չէ բերէ :
- 6 Սուտ լեզուով դանձեր վաստակիլը
- Մահը փնտռողներուն հալածած ունայնութիւնն է :
- 7 Ամբարիշտներուն բռնութիւնը զանոնք պիտի կորսընցընէ .
- Վասն զի իրաւունք ընէլ չեն ուղեր :
- 8 Երբ որ մարդուն ճամբան ծուռ է, կը խտտորի .
- Բայց մաքուր եղողին դործքը ուղիղ է :
- 9 Աղէկ է տանիքի մը անկիւնը բնակիլ
- Քան թէ կռուասէր կնկան հետ մեծ տան մէջ :
- 10 Ամբարիշտ մարդուն հոգին չարութեան կը ցանկայ,
- Ու անոր ընկերը անոր առջևը շնորհք չըզըններ :
- 11 Թէ որ ծաղը ընողը տուգանքի հանդիպի,
- միամիտը իմաստուն կ'ըլլայ,
- Եւ թէ որ իմաստունը խրատուի, դիտութիւն կը ստանայ :
- 12 Արդարը խոհեմութեամբ ամբարշտին տունը կը դիտէ,

- Երբ որ ամբարիշտները չարութեան համար կը կործանին :
- 13 Ով որ աղքատին աղաղակը չսեղու համար իր ականջը կը զոցէ ,  
Ինքն ալ պիտի աղաղակէ , ու իրեն լսող պիտի չըլլայ :
- 14 Գաղտնի պարզեք բարկութիւնը կ'իջեցրնէ ,  
Եւ ծոցը բռնուի ընծան սաստիկ կատաղութիւնը :  
Ինչ որ բռնուի ընդդէմ զարդարին ուրախութիւն է ,  
Բայց անիրաւութիւն ընդդէմ ընդդէմ տանջանք է :
- 16 Խոհեմութեան ճամբայէն մոլորող մարդը Մեռելներուն ժողովքին մէջը կ'իջնէ :
- 17 Ուրախութիւն սիրողը կարօտութեան մէջ կ'իյնայ .  
Գինին ու եղը սիրողը չհարստանար :
- 18 Ամբարիշտը արդարին համար ,  
Ու անօրէնը ուղիղներուն համար փրկանք կ'ըլլայ :
- 19 Աղէկ է անապատ տեղ մը ընակիլ՝  
Քան թէ կուռասեր ու բարկացող կնկան հետ :
- 20 Իմաստունին ընակարանին մէջ ցանկալի դանձ ու եղ կը գտնուի .  
Բայց անմիտ մարդը իր ունեցածը կը կլլէ :
- 21 Արդարութեան ու ողորմածութեան հետեւողը  
Կեանք , արդարութիւն և փառք պիտի գտնէ :
- 22 Իմաստունը զօրաւորներուն քաղաքը կ'ելլէ ,  
Եւ անոնց ապաւինած ամբոնութիւնը կը փրկեցնէ :
- 23 Իր բերանը ու լեզուն պահողը  
Իր հոգին նեղութիւններէն կը պահէ :

- 24 Հպարտութեամբ և բարկութեամբ վարուող մարդուն անունը  
Հպարտ և յանդուգն ծաղր ընող կ'ըսուի :  
25 Ծոյլէն ցանկութիւնը զանիկա կը մեռցրնէ ,  
Վասն զի անոր ձեռքերը աշխատիլ չեն ուզեր :
- 26 Անիկա ամէն օր սաստիկ կը ցանկայ .  
Իսկ արդարը կու տայ ու չինայներ :
- 27 Ամբարիշտներուն զոհը պիղծ է ,  
Մանաւանդ՝ երբոր զանիկա չար դիտաւորութեամբ կը մատուցանեն :
- 28 Սուտ վկան պիտի կորուսի .  
Բայց լսող մարդը հաւատարմութեամբ պիտի խօսի :
- 29 Ամբարիշտ մարդը իր երեսը կը պինտցրնէ .  
Բայց ուղիղը իր ճամբաները կը շտկէ :
- 30 Իմաստութիւն , հանձար կամ խորհուրդ մը չկայ ,  
Որ Տէրոջը դէմ քննուի :
- 31 Պատերազմի օրուան համար ձին կը պատրաստուի ,  
Բայց փրկութիւնը Տէրոջմէ է :

## ԳԼ . ԻԲ

- 1 Բռնի անունը շատ հարստութենէն աւելի ընտիր է .  
Ու շնորհքը արծաթէն ու ոսկիէն աղէկ է :
- 2 Հարուստը ու աղքատը իրարու կը հանդիպին .  
Անոնց ամէնը ստեղծողը Տէրն է :
- 3 Խորագէտը չարիքը կը տեսնէ ու կը զգուշանայ .  
Բայց միամիտները որով կ'անցնին ու վնաս կը կրեն :

- 4 Խոնարհութեան և Տէրոջը երկիւղին վախ-  
ճանք  
Հարստութիւն, փառք ու կեանք է :
- 5 Ծուռ մարդուն ճամբուն մէջ փուշեր ու  
բողոքներ կան .  
Իր հոգին պահողը անոնցմէ հեռու կ'ըլլայ :
- 6 Կրթէ մանուկը իր ճամբան սկսած ատենը,  
Որ իր ծերութեան առնեն ալ անկէ չխո-  
տորի :
- 7 Հարուստը աղքատներուն վրայ կը տիրէ,  
Ու փոխ առնողը փոխ տուողին ծառայ կ'ըլ-  
լայ :
- 8 Չարութիւն ցանոցը ունայնութիւն կը հնձէ,  
Եւ անոր բարկութեանը դաւազանը պիտի  
կորսուի :  
Աղէկ աչք ունեցողը օրհնած կ'ըլլայ,  
Վասն զի իր հացէն աղքատին կու տայ :
- 10 Ծաղը ընողը թէ որ վաւերես, կռիւր կ'անց-  
նի,  
Ու վէճը և անարդանքը կը դադարի :
- 11 Սրտի մաքրութիւն սիրողին շրթունքներուն  
վրայ շնորհք կայ,  
Ու թագաւորը անոր բարեկամ կ'ըլլայ :
- 12 Տէրոջը աչքերը գիտութիւնը կը պահպանեն,  
Եւ ինքը անօրէնին խօսքերը կ'աւրէ :
- 13 Ծռլը կ'ըսէ, Դուրսը առիւծ կայ,  
Հրապարակին մէջը պիտի մեռցուիմ :
- 14 Օտար կնիկներուն ըբրանը խորունկ փոս է,  
Տէրոջը ատելի եղողը հոն կ'իջնայ :
- 15 Մանուկին սրտին մէջ յիմարութիւնը կա-  
պուած է .  
Չանիկա խրատի գաւազանը կը հեռացընէ  
անկէ :
- 16 Իր սրտի շատը շատընելու համար աղքա-  
տին զրկանք ընողը

- Ու հարուստին տուողը անշուշտ կարօտու-  
թեան կը հասնի :
- 17 Ականջը ծռէ ու իմաստուններուն խօս-  
քերը մտիկ ըրէ,  
Եւ քու սիրտդ իմ գիտութեանս տուր .
- 18 Վասն զի թէ որ անոնք քու սրտիդ մէջը  
պահես, հաճելի բան է .  
Անոնք քու շրթունքներուդ վրայ ալ պիտի  
հաստատուին :
- 19 Ահա քեզի ու բռնէրը այսօր իմացուցի,  
Որպէս զի քու ապաւինութիւնդ Տէրոջը  
վրայ ըլլայ :
- 20 Միթէ ևս քեզի շատ անգամ խրատներով  
Ու գիտութեամբ չդրեցի՞,  
21 Որ քեզի ճշմարիտ խօսքերուն ստուգու-  
թիւնը սորվեցընեմ,  
Որ քեզի հարցընողներուն ճշմարիտ խօսքե-  
րով պատասխան տաս :
- 22 Աղքատը մի կողպտեր իր աղքատու-  
թեանը համար,  
Ու տնանկը դատաստանի մէջ մի կոխեր .
- 23 Վասն զի Տէրը անոնց իրաւունքը պիտի  
պաշտպանէ,  
Եւ զանոնք կողպտողներուն հոգին պիտի  
կողպտէ :
- 24 Բարկացող մարդուն հետ ընկերութիւն  
մի ընէր,  
Ու ցասկոտ մարդուն հետ մի երթար .
- 25 Որ չըլլայ թէ անոր ճամբաները սորվես,  
Եւ քու հողուդ որողայթ վաստրկես :
- 26 Չեռք տուողներէն մի ըլլար,  
Ու ապարտքի համար երաշխաւոր եղողնե-  
րէն .

- 27 Թէ որ վճարելու կարողութիւն չունիս,  
Ինչու համար տակէդ քու անկողինդ առնեն:
- 28 Չըլայ որ տեղէն վերջընես ան վաղեմի սահմանին շուշուշ,  
Որ քու հայրերդ դրեր են:
- 29 Իր դործքին մէջ ժիր մարդ մը կը տեսնենս,  
Անիկա թաղաւորներուն առջևը պիտի կայնի,  
Աննչան մարդոց առջևը պիտի չկայնի:

## ԳԼ. ԻԳ

- 1 Երբոր իշխանի հետ սեղան նստիս,  
Առջևդ դրուածք աղէկ նայէ.
- 2 Ու թէ որ դուս ատորժակի տէր չարք ես,  
Կոկորդիդ վըպ դանակ դիր:
- 3 Անոր ազնիւ կերակուրներուն մի ցանկար.  
Վասն զի անոնք խաբէութեան հաց են:
- 4 Հարուստ ըլլալու մի աշխատիր.  
Քու խորհուրդէդ ետ կեցիր:
- 5 Աչք պիտի տնկես ան բանին որ ուրե՛ն է.  
Անիկա անշուշտ իրեն թւեր կը շինէ,  
Ու արծիւի պէս օդը կը թռչի:
- 6 Չար աչք ունեցողին հացը մի ուտեր,  
Եւ անոր ազնիւ կերակուրներուն մի ցանկար.
- 7 Վասն զի անիկա իր սրտին մէջը ինչպէս որ  
կը մտածէ, այնպէս է.  
Կեր ու խմէ կ'ըսէ բեզի,  
Բայց անոր սիրտը քեզի հետ չէ:
- 8 Կերած պատառդ պիտի փսխես,  
Ու հաճելի խօսքերդ պիտի կորսնցընես:
- 9 Յիմարին ականջներուն մի խօսիր,  
Քանզի քու խօսքերուդ իմաստութիւնը  
կ'անարդէ:

- 10 Վաղեմի սահմանին շուշու տեղէն մի վերջընէր,  
Ու որբերուն արտերը մի մտներ.
- 11 Քանզի անոնց վրէժինդ իրը զօրաւոր է,  
Եւ քեզի դէմ անոնց իրաւունքը անիկա պիտի պաշտպանէ:
- 12 Քու սիրտդ իրատի տուր,  
Ու ականջներդ՝ դիտութեան խօսքերուն:
- 13 Տղայէն իրատը մի կտրեր,  
Վասն զի թէ որ զանիկա դաւազանով ծեծես,  
չմտնիր:
- 14 Դուս անիկա դաւազանով կը ծեծես,  
Բայց անոր հոգին դժոխքէն կ'ազատես:
- 15 Որդեակ իմ, թէ որ քու սիրտդ իմաստուն ըլլայ,  
Իմ սիրտս ալ պիտի ուրախանայ:
- 16 Ու երբոր քու շրթունքներդ ուղիղ բաներ խօսին,  
Իմ երկամունքներս պիտի ցնձան:
- 17 Քու սիրտդ մեղաւորներուն չնախանձի,  
Հապա ամէն օր Տերօրը վախին մէջ եղիր:
- 18 Վասն զի իրաւցընէ վախճան մը կայ,  
Ու քու յոյսդ պիտի չխորի:
- 19 Որդեակ իմ, լսէ ու իմաստուն եղիր,  
Եւ քու սիրտդ առէ՛ր ճամբուն մէջ շտակէ:
- 20 Մի բնկերանար զինեմոյններուն հետ,  
Ու իրենց մարմինը մաշողներուն հետ.
- 21 Վասն զի զինեմոյը ու շուպը աղքատ կ'ըլլան.  
Եւ չար բուռը պատրուած հանդերձներ կը հազցընէ:
- 22 Հնազանդութիւն բրէ հօրդ որ քեզ ծներ է,  
Ու մի անարդեր քու մայրդ՝ երբոր կը պառուի:

- 23 Ճշմարտութիւնը ծախու առ ու զանազան մի ծախեր .  
Նշանակէ իմաստութիւնը , խրատը ու հանձարը :
- 24 Արդարին հայրը շատ պիտի ցնծայ ,  
Եւ իմաստուն զաւակ ծնանողը անոր վրայ պիտի ուրախանայ :
- 25 Թող քու հայրդ ու մայրդ +- իրար ուրախանան ,  
Ու քեզ ծնանողը թող ցնծայ :
- 26 Որդեակ իմ , քու սիրտդ ինձի տուր ,  
Եւ քու աչքերդ թող իմ ծամրաներս դիտեն .
- 27 Վասն զի պոռնիկը խորունկ փոս է ,  
Ու օտար կնիկը նեղ ջրհոր է .
- 28 Եւ անիկա դողի պէս դարանը կը մտնէ ,  
Ու մարդոց մէջ անհաւատարիմները կ'աւելցընէ :
- 29 Որո՞ւնն է վայր . որո՞ւնն է ո՛հը .  
Որո՞ւնն են կռիւները . որո՞ւնն են տրտունջները .  
Որո՞ւնն են առանց պատճառի վէրքերը .  
Որո՞ւնն է աչաց կարմրութիւնը :
- 30 Գինիին քովը մնացողներուն ,  
Խառնած գինին փնտելու գացողներուն :
- 31 Մի նայիր գինիին կարմրութեանը ,  
Գաւաթին մէջ իր գոյնը ցուցընելուն ու շետակ վազելուն .
- 32 Անիկա ետքը օձի պէս կը խածնէ ,  
Ու քարրի պէս կը խայթէ :
- 33 Անի իտրու քու աչքերդ օտար կնիկներու պիտի նային ,  
Եւ քու սիրտդ ծուռ բաներ պիտի խօսի .
- 34 Եւ ծովուն մէջը պառկողի պէս՝

Ու կայմի վրայ պառկողի պէս պիտի ըլլաս :  
35 Եւ ուրիշ բէ՛ռ ,  
Չիս ծեծեցին , ու ես ցաւ մը չզգացի ,  
Ինձի գարկին , ու ես բան մը չիմացայ .  
Ե՛րբ պիտի արթըննամ ,  
Որ զանիկա նորէն փնտուեմ :

ԳԼ . ԻԴ

- 1 Չար մարդոց մի նախանձիր ,  
Ու անոնց հետ կենալու մի ցանկար .
- 2 Վասն զի անոնց սիրտը բռնութիւն կը խորհի ,  
Եւ անոնց շրթունքները վնասներու վրայով կը խօսին :
- 3 Տունը իմաստութեամբ կը շինուի ,  
Ու հանձարով կը հաստատուի :
- 4 Եւ շտեմարանները գիտութեամբ՝  
Ամէն բէ՛ռ՝ պատուական ու վայելուչ զանձերով կը լցուին :
- 5 Իմաստուն մարդը զօրաւոր կ'ըլլայ ,  
Ու գիտութիւն ունեցողը ոյժը կ'աւելցընէ :
- 6 Վասն զի պատերազմը խօհեմութեամբ կ'ընես .  
Եւ ազատութիւնը խորհրդականներու շատութիւնով կ'ըլլայ :
- 7 Իմաստութիւնը յիմարին համար շատ բարձր է .  
Անիկա զրանը մէջ իր բերանը չբանար :
- 8 Ով որ պարտութիւն ընէ կը մտածէ ,  
Անիկա նենգամիտ պիտի բուռի :
- 9 Յիմարութեան խորհուրդը մեղք է ,  
Եւ ծարր ընողը մարդոց զգուշի է :
- 10 Թէ որ նեղութեան օրը թուլնաս ,  
Ոյժդ քիչ է :

- 11 Աղատէ զանոնք որ մեռցուելու կը տա-  
րուին,  
Ու սպաննուելու վրայ եղողները աւարտէ  
ետ մի կենար :
- 12 Թէ որ բնէ թէ Մենք ասիկա չդիտցանք,  
Ահա սիրտերը կըռողը ինքը կը հասկընայ .  
Ու քու հոգիդ պաշտպանողը ինքը դիտէ,  
Եւ ահա մարդուն իր գործքին չափովը պի-  
տի հաստուցանէ :
- 13 Որդեակ իմ, մեղը կեր, որ աղէկ է,  
Եւ մեղքախորիսն Խէր, որ քմացդ քաղցր է :
- 14 Իմաստութեան ճանաչումն ալ քու հոգիիդ  
այնպէս աւարտէ լինի ըստ,  
Թէ որ զանիկա գտնես .  
Եւ վախճան մը կայ,  
Ու քու յոյսդ պիտի չկտրի :
- 15 Ով չար, արդարին տանը դարանակալ մի  
ըլլար,  
Անոր բնակարանը մի աւերեր :
- 16 Վասն զի արդարը թէն եօթը անգամ ալ  
իյնայ՝ պիտի կանգնի .  
Բայց չարերը ձախողութեան մէջ պիտի իյ-  
նան :
- 17 Երբոր քու թշնամիդ իյնայ՝ մի ուրախա-  
նար,  
Ու երբոր անոր ոտը սահի՝ քու սիրտդ  
թող չցնծայ :
- 18 Չըլլայ որ Տէրը տեսնէ ու իրեն անհաճոյ ե-  
րևնայ,  
Եւ իր բարկութիւնը անոր վրայէն դարձնէ :
- 19 Չարագործներուն համար մի սրտմտիբ,  
Ու ամբարիշտներուն մի նախանձիբ .
- 20 Վասն զի չար մարդը քորէ վախճան չունե-  
նար .

- Ամբարիշտներուն ճրագը պիտի մարի :
- 21 Որդեակ իմ, Տէրովմէ ու թաղաւորէն  
վախցիր,  
Եւ խոստարար մարդոց հետ մի խառնուիր :
- 22 Քանզի անոնց կործանումը յանկարծ կ'ըլ-  
լայ,  
Ու երկուքին ալ պատուհասը ով զիտէ :
- 23 Աս բաներն ալ իմաստուններուն յարու-  
է .  
Դատաստանի մէջ աչառութիւն ընելը աղէկ  
չէ :
- 24 Ով որ ամբարշտին կ'ըսէ թէ Դուն արդար  
ես,  
Ազգերը անոր անէծք պիտի տան,  
Ու սոցովուրդները զանիկա պիտի անարգեն :
- 25 Բայց յանդիմանութիւն տուողներուն շը-  
նորհք կ'ըլլայ,  
Եւ անոնց վրայ բարի օրհնութիւն կու դայ :
- 26 Շիտակ պատասխան տուողը  
Շրթունքներ կը համբուրէ :
- 27 Դուրսի գործքդ կանոնաւորէ,  
Եւ զանիկա քու արտիդ մէջ կարգի դիր,  
Ու տունդ ետքը շինէ :
- 28 Քու զբացիիդ դէմ զուր տեղը վկայու-  
թիւն մի ըներ,  
Եւ քու շրթունքներովդ մի խաբեր :
- 29 Մի բնի թէ Անիկա ինձի ինչպէս որ բռաւ,  
ես ալ անոր այնպէս պիտի բռնամ,  
Ան մարդուն իր գործքին համեմատ հատու-  
ցում պիտի ընեմ :
- 30 Ծոյլ մարդուն արտին քովէն՝  
Ու պակասամիտ մարդուն այդիին քովէն  
անցայ .

31 Եւ ահա ամենուն մէջը փուշեր բուսեր էին,  
Ու անոնց երեսը եղինձներ ծածկեր էին,  
Եւ անոր քարէ պատը փլած էր .

32 Ու երբոր զնիւն տեսայ՝ մտորիս մէջը պա-  
հեցի .

Անոր նայեցայ -- նիւն խրատ առի :

33 Թէ որ քիչ մը քնանաս , քիչ մը նիրհես ,  
Ու քիչ մը ձեռք ձեռքի վրայ գնես ննջելու  
համար ,

34 Բու աղքատութիւնդ ճամբորդի պէս պիտի  
զայ ,

Եւ քու կարօտութիւնդ՝ սպառազինեալ  
մարդու պէս :

ԳԼ. ԻԵ

1 Առնը ալ Սողոմոնին առականքն են , որ  
Յուդայի եզեկիս թագաւորին մարդիկը օրի-  
նակեցին :

2 Բանը ծածկելը Ատուծոյ փառքն է .  
Բայց թագաւորներուն փառքը բանը որէի  
քննելն է .

3 Երկնից բարձրութիւնը ու երկրիս խորու-  
թիւնը

Եւ թագաւորներուն սիրտը չքննուիր :

4 Վերցուր արծաթէն կղկղկնքը ,  
Ու ոսկերչին համար յարմար անօթ կ'ելլէ :

5 Վերցուր թագաւորին առջևէն ամբարիշտը ,  
Ու անոր աթոռը արդարութեամբ կը հաս-  
տատուի :

6 Թագաւորին առջևը մի պարծիր ,  
Եւ մեծերուն տեղը մի կենար .

7 Վասն զի աղէկ է որ քեզի ըսնն թէ Հոս ե-  
լիք ,

Բան թէ քու աչքերուդ տեսած իշխանին  
առջևը վար իջեցընեն քեզ :

8 Կռիւի համար շուտով դուրս մի ելլեր .  
Զըլլայ թէ երբոր ընկերդ քեզ ամէջընէ ,  
Դուն վերջը կնչ ընկերդ չէիքս :

9 Ընկերիդ հետ քու դատդ վարէ ,  
Բայց զազանիքը ուրիշն մի յայտներ .

0 Զըլլայ որ լսող քեզ անարդէ ,  
Ու զէշ անուեդ անջնջելի մնայ :

11 Յարմարութեամբ բուսած խօսքը՝  
Արծաթէ զարդերու մէջ որոնք ոսկիէ  
խնձորներու կը նմանի :

12 Իմատուունին յանդիմանութիւնը՝ մտիկ ընող  
ականջն

Ոսկիէ օղ ու մարուր ոսկիէ մանեակ է :

13 Հաւատարիմ՝ զեսպանը՝ զեկրը խրկողներուն  
Հունձրի առննի ձիւնին զովութեանը պէս է ,  
Եւ իր տիրոջը հոգին կը զուարճացընէ :

14 Սուտ առատաձեռնութեան վրայ պարծեն-  
ցողը

Անանձը ամբերու ու հովէ պէս է :

15 Համբերութեամբ իշխանին սիրտը կը շինուի,  
Եւ անոյշ լեզուն ոսկորներ կը կտտէ :

16 Թէ որ մեղդ զտեսն՝ քեզի բաւական եղածին  
չպի կեր ,

Զըլլայ որ անով կշտանաս ու զանիկա փրս-  
խես :

17 Բու ոտդ դրացիիդ տունը յաճախ չկոխէ ,  
Զըլլայ որ քեզմէ ձանձրանայ ու քեզ ատէ :

18 Իր դրացիին համար սուտ վկայութիւնը  
նողը

Ուռի , սուրի և սրած նետի պէս է :

19 Նեղութեան օրը անհաւատարիմ՝ մարդու  
սպաւինելը

Փշրուող ակուայի և դուրազլոր ոտրի  
պէս է :

- 20 Տրտում մարդուն առջևը երգեր երգողը Ցուրտ օրը էր զգեստը հանողին, Կա՛ր բորակի վրայ Բռնա՛ռն քայցախին ինչնա՛ն է :
- 21 Թե որ թշնամիդ անօթի է, անոր հայ կերպուր, Ու թե որ ծարաւ է, անոր ջուր խնջուր .
- 22 Բանզի բռնի շինվ անոր զիտուն վրայ կրակի կայծեր կը դիզես, Եւ Տէրը քեզի հատուցում պիտի ընէ :
- 23 Հիւսիսային հովը անձեր կը ջրուէ, Ու խոժոռ դէմքը՝ չարասն լեզուն :
- 24 Աղէկ է տանիքի մը անկիւնը բնակիլ, Բան թէ կուուսէր կնկան հետ մեծ տան մէջ :
- 25 Ինչպէս է պաղ ջուրը ծարւած մարդուն, Ասանկ ալ է հեռու երկրէ էլ՝ բարի լուրը :
- 26 Չար մարդուն առջևը ի խնդ արդարը Պղտորուած աղբուրի ու աւրուած ակի ինչնա՛ն է :
- 27 Շատ մեղր ուտելը աղէկ չէ, Եւ Բարձր իր փառքը փնտուելը փառք չէ :
- 28 Իր ողին չըսողը մարդը Փլած ու անպարիսպ քաղաքի պէս է :

ԳԼ . ԻԶ

- 1 Ինչպէս որ ամառուան մէջ ձիւն, և հունձքի տտեն անձրև, Այնպէս որ յիմարին պատիւ չվայլեր :
- 2 Ինչպէս որ ճնձղուկը կը պտրտի, ու ծիծեռնիկը կը թռչի, Այնպէս ալ առանց պատճառի անէծքը չգար :
- 3 Ձիուն խարաղան՝ ու իշուն սանձ՝

- Եւ յիմարներուն կռնակին զաւաղան պէտէ :
- 4 Յիմարին իր յիմարութեանը համեմատ պատասխան մի տար, 2ըլլայ որ դուն ալ անոր նման ըլլաս :
- 5 Յիմարին իր յիմարութեանը համեմատ պատասխան տուր, 2ըլլայ որ անկեղ զիջքը իմաստուն կարծէ :
- 6 Յիմարին ձեռքովը խօսք խրկողը Իր ոտքերը կը կտրէ ու վնաս կը քաշէ :
- 7 Ինչպէս որ կողին ոտքերը կ'երերան, Այնպէս ալ յիմարին բերնին մէջ առակը :
- 8 Յիմարին պատիւ տուողը Բարակոյտի մը մէջ պարտաւոր քարերու ծրար բռնուլն կը նմանի :
- 9 Առակը յիմարին բերնին մէջ Գինովին ձեռքը մտնող փուշին պէս է :
- 10 Մեծ է ամէն բան Ստեղծողը, Որ յիմարին վարձք կու տայ, և յանցաւորներուն վարձք կու տայ :
- 11 Ինչպէս որ շունը իր փսխածին կը դառնայ, Այնպէս ալ յիմարը իր յիմարութեանը կը դառնայ :
- 12 Ձինքը իմաստուն կարծող մարդ մը տեսա՞ր . Աւելի յոյս կայ յիմարէն քան թէ անկէ :
- 13 Ծոյլը կ'ըսէ թէ ճամբուն մէջ առիւծ կայ, Հրապարակներուն մէջ առիւծ :
- 14 Ինչպէս որ դուռը իր ծղնիներուն վրայ կը դառնայ, Այնպէս ալ ծոյլը իր անկողինին վրայ :
- 15 Ծոյլը իր ձեռքը ամանին մէջը կը խօթէ, Որ բերանը աչքա՛մ տանելու դժուարութիւն կը զգայ :
- 16 Ծոյլը իր աչքերուն՝ Խելացի պատասխան տուող Եօթը մարդէն աւելի իմաստուն կ'երենայ :

- 17 Իրենը չեղած դատին համար բարկացող ան-  
ցաւորը  
Շունը ականջներէն բռնադին ոչն է :
- 18 Ինչպէս կատարած մարդը՝ որ կրակի կայծեր,  
նետեր ու մահ կը ցանէ,
- 19 Այնպէս է ան մարդը՝ որ իր բարեկամին  
նենգութիւն կ'ընէ,  
Ու ետը կ'ըսէ, Ահա կատակ ըրի :
- 20 Առանց փայտի կրակը կը մարի,  
Եւ թէ որ քառ չըլլայ, կուրը կը դադարի :
- 21 Ինչպէս ածուխը կայծերուն, ու փայտը կը-  
րակին,  
Այնպէս է կռուասեր մարդը վէճ բռնկցը-  
նելու :
- 22 Քառ մարդուն խօսքերը քաղցր պատառ-  
ներու պէս են,  
Ու անոնք մինչև փորին շտեմարանները կ'իջ-  
նեն :
- 23 Եռանդուն շրթունքները և չար սիրտը  
Արծաթի կղկղանքով ապիկած հողէ ամա-  
նի ինչն են :
- 24 Ատեցողը իր շրթունքներովը կը կեղծէ,  
Ու սրտին մէջը նենգութիւն կը պահէ :
- 25 Անոր գեղեցիկ խօսուածքին չհաւատաս .  
Վասն զի անոր սրտին մէջը և թիւր զղուեի  
բան կայ :
- 26 Ան որ իր ատելութիւնը նենգութեամբ կը  
ծածկէ,  
Անոր չարութիւնը ժողովքի մէջ պիտի  
յայտնուի :
- 27 Փոս փորոզը ինքը մէջը պիտի իյնայ,  
Եւ ան որ բար կը զըրէ՝ իրեն պիտի դառ-  
նայ :
- 28 Ստախօս լեզուն իր ծեծածները կ'ատէ .  
Ու շողջորթող բերանը կտրուստ կ'ընէ :

ԳԼ. ԻԷ

- 1 Վաղուան համար մի պարծիր,  
Վասն զի չես գիտեր թէ օրը ինչ պիտի ծը-  
նանի :
- 2 Քեղ ուրիշ գողէ և չէ թէ քու բերանդ,  
Օտարը՝ և չէ թէ քու շրթունքներդ :
- 3 Քարը ծանրութիւն ու աւագը բեռ . առէ :  
Բայց յիմարին բարկութիւնը երկուքէն ալ  
ծանր է :
- 4 Բարկութիւնը անողորմ է, ու սրտմտու-  
թիւնը խիստ է .  
Բայց նախանձին առջևը ո՞վ կրնայ կենալ :
- 5 Յայտնի յանդիմանութիւնը  
Ծածուկ սէրէն աղէկ է :
- 6 Բարեկամին քառն վէրքերը հաւատարիմ են .  
Բայց թշնամին համբոյրները առատ են :
- 7 Կուշտ մարդը խորիսխը կ'արհամարհէ .  
Բայց անօթի մարդուն ամէն լեզի բան ա-  
նոյշ կու գայ :
- 8 Իր տեղէն թափառական եղող մարդը՝  
Իր բոյնէն թափառական եղող թռչունին  
պէս է :
- 9 Եղբ ու խունկը սիրտը կը զուարճացընեն .  
Նմանապէս բարեկամին քաղցրութիւնը՝  
մտերիմ՝ խորհրդով :
- 10 Քու բարեկամը ու քու հօրը բարեկամը  
մի թողուր,  
Եւ քու նեղութեանդ ատենը քու եղբորդ  
տունը մի երթար .  
Մօտ դբացին հեռու եղող եղբորմէ աղէկ է :
- 11 Որդեակ իմ, իմաստուն եղիբ ու սիրտս ու-  
րախացուր,  
Որ զիս անարգողին պատասխան տամ :

- 12 Խորագէտը չարիքը կը տեսնէ ու կը զգուշանայ .  
Բայց միամիտները առաջ կ'անցնին ու վնաս կը կրեն :
- 13 Օտարականի մը երաշխաւոր եղողին զգեստը առ ,  
Եւ օտար կնկան համար երբեք իր իրաւունքէն զրաւ առ :
- 14 Թէ որ մէկը առաւօտուն կանուխ ելլէ , ու իր զբացին բարձր ձայնով օրհնէ ,  
Ասիկա անոր անէծք կը սեպուի :
- 15 Անձրեատ օրուն կարունակ կաթիլը  
Ու կռուասեր կնիկը իրարու կը նմանին .
- 16 Ձանիկա ծածուկ պահողը հովը կը պահէ ,  
Եւ աջ ձեռքին մէջ դռնաքնէն ելլէ զէնքը յայտնէ :
- 17 Երկաթը երկաթով կը սրուի ,  
Ու մարդը իր բարեկամին երեսը կը սրէ .
- 18 Թղենիին հող տանողը անոր պտուղը կ'ուտէ ,  
Եւ իր տէրը պահպանողը պատիւ կը գտնէ :
- 19 Ինչպէս ջուրը՝ երեսը երեսին ,  
Նոյնպէս ալ սիրտը մարդը մարդուն իւր շնորհքէն :
- 20 Դժոխքը ու կորուստը ջն կշտանար .  
Մարդուն աչքերն ալ ջն կշտանար :
- 21 Ինչպէս հալոյցը արծաթը՝ և քուրան օսկին իւր քորնէն ,  
Այնպէս ալ մարդը զինքը զովոյ ընրանը իւր քորնէն :
- 22 Յիմարը ցորենի հետ անկանի մէջ սանդիւտով ձեճես ալ ,  
Անոր յիմարութիւնը անկէ չըթար :
- 23 Քու սխարներուդ վեճակը աղէկ գիտցիր ,  
Եւ ուր հօտերուդ աղէկ նայէ .
- 24 Վասն զի հարստութիւնը միշտ ջմար ,

- Ու թաղը դարէ 'ի դար չտներ :
- 25 Կանանքը կը բուսնի , խտր կ'երկնայ ,  
Եւ լեռներուն խտրեր կը ժողվուին :
- 26 Գառները քու հաղուստիդ համար են ,  
Ու նոխազները դաշտերուն զինն են .
- 27 Քու կերակուրիդ համար և քու տանդ կերակուրին համար  
Ու քու աղախիններուդ ապրուստին համար  
Բաւական այժի կաթ դրոյն ունէնա :

## ԳԼ ԻԸ

- 1 Ամբարիշտը առանց մէկու մը հալածելուն կը փախչի .  
Բայց արդարները առողջ առիւծի պէս քաջասիրտ կ'ըլլան :
- 2 Երկրին յանցանքովը անոր իշխանները շատ կ'ըլլան .  
Բայց անոր վեճակը իմաստուն ու գիտուն մարդուն ձեռքովը շատ արեւ կը դիմանայ :
- 3 Աղքատները զրկող չքաւոր մարդը՝  
Հացի կարօտութիւնը բերող յորդահոսանձրեւի դէմ է :
- 4 Օրէնքը մերժողները ամբարիշտները կը դռնվեն .  
Բայց օրէնքը պահողները անոնց դէմ կը կենան :
- 5 Չար մարդիկ իրաւունքը չեն հասկընար .  
Բայց Տէրը փնտառողները ամէն բան կը հասկընան :
- 6 Իր կատարելութեանը մէջ քալող աղքատը՝  
Ծուռ ծամրաներու մէջ քալող հարուստ մարդէն աղէկ է :
- 7 Օրէնքը պահողը իմաստուն տղայ է .

- Բայց շոտայններուն բարեկամ եղողը իր հայրը կ'ամչցընէ :
- 8 Իր ստացուածքը տոկոսութիւնով և վաշխով աւելցընողը՝
- Չանիկա աղքատին ողորմութիւն ընողին համար կը ժողվէ :
- 9 Ան որ օրէնքը մտիկ ընելէն ետ կը դարձընէ իր ակոնջը ,
- Անոր արդթքը անդամ պիղծ է :
- 10 Ուղիները չար ճամբու մէջ մտրելցընողը իր փոսին մէջը պիտի իյնայ .
- Սակայն արդարները բարեք պիտի ժառանգեն :
- 11 Հարուստ մարդը իր աչքերուն իմաստուն կ'երենայ .
- Բայց հանձարեղ աղքատը զանիկա կը բննէ :
- 12 Երբոր արդարները ուրխանան , մեծ փառք կ'ըլլայ .
- Բայց երբոր ամբարիշտները բարձրանան , մարդ կը փնտռուի :
- 13 Իր յանցանքները ծածկողը յաջողութիւն չգտներ ,
- Բայց անոր խոտովանողը ու մէկդի ձգողը ողորմութիւն կը գտնէ :
- 14 Միշտ փախցող մարդը երանելի է .
- Բայց իր սիրտը խտտացընողը չարիքի մէջ պիտի իյնայ :
- 15 Աղքատ ժողովուրդի վրայ իշխող ամբարիշտը
- Մռնչող առիւծի ու անյագ արջու ինչնէ :
- 16 Խոհեմութիւն չունեցող իշխանը շատ զըրկողութիւններ կ'ունէ .
- Բայց ազահութիւնն զգուողը էր կենսքը կ'աւելցընէ :
- 17 Արիւնապարտ մարդը մինչև գուրը կը փախչի .

- Թող մէկը չպաշտպանէ զանիկա :
- 18 Կատարելութեամբ քալողը փրկութիւն կը գտնէ .
- Բայց ծուռ մարդը որ երկու ճամբով էր անցնէ ,
- անոր մէկուն մէջը կ'իյնայ :
- 19 Իր երկիրը դործողը հայցով պիտի կշտանայ ,
- Ու դատարկ մարդոց հետեողը աղքատութեամբ պիտի լեցուի :
- 20 Հաւատարիմ մարդը շատ օրհնութիւններ կ'ունէ .
- Բայց հարուստ ըլլալու արտորացողը պիտի չարդարանայ :
- 21 Աչտութիւն ընելը աղէկ չէ ,
- Վասն զի պատառ մը հացի համար մարդ յանցանք կը դործէ :
- 22 Չար աչք ունեցող մարդը հարուստ ըլլալու կ'արտորայ ,
- Ու չղիտեր որ իր վրան աղքատութիւն պիտի գայ :
- 23 Մարդ յանդիմանողը վերջապէս շնորհք կը գտնէ .
- Լեզուով չողբորթութիւն ընողէն աւելի :
- 24 Ան որ իր հայրը կամ իր մայրը կը կողոպտէ , ըսելով թէ Յանցանք չէ ,
- Անիկա ապականաբար մարդուն ընկերն է :
- 25 Հպարտ սիրտ ունեցող մարդը կոխ կը հանէ .
- Բայց Տէրօջը ապականողը պիտի զիրնայ :
- 26 Իր սրտին ապականողը անմիտ է .
- Բայց իմաստութեամբ քալողը պիտի ազատի :
- 27 Աղքատին տուողը կարօտ չըլլար .
- Բայց անիկ երես դարձնողը շատ անէծքներ կ'ունէ :
- 28 Թէ որ ամբարիշտները բարձրանան , մարդիկ կը պահուին .

Բայց թէ որ անոնք կորսուին, արդարները կը շատնան:

## ԳԼ. ԻԹ

- 1 Մտտ անդամ՝ յանդիմանուած մարդը՝ որ իր պարանոցը կը խտտացընէ, Յանկարծ պիտի կորսուի ու բժշկութիւն պիտի չդտնէ:
- 2 Թէ որ արդարները զօրանան, Ժողովուրդը կ'ուրախանայ .  
Բայց երբոր ամբարիշտը իշխանութիւն կ'ունենայ, Ժողովուրդը կը հեծէ:
- 3 Իմաստութիւն սիրող մարդը իր հայրը կ'ուրախացընէ .  
Բայց պրոանիկներուն ընկեր եղողը ստացուածքը կը ցրուէ:
- 4 Թաղաւորը արդարութեամբ կը հաստատէ էր երկիրը .  
Բայց կաշառք առնողը զանիկա կը կործանէ:
- 5 Իր ընկերին շողքորթութիւն ընող մարդը Անոր քայլերուն որոգայթ կը լարէ:  
Չար մարդուն ամբարշտութեանը մէջ որոգայթ կայ .  
Բայց արդարը ցնծութեան և ուրախութեան մէջ պիտի ըլլայ:
- 7 Արդարը աղքատներուն դատը գիտէ Բայց չար մարդը տեղեակ չըլլար:
- 8 Ծաղը ընող մարդիկ քաղաքը կը բռննկցընեն .  
Բայց իմաստունները բարկութիւնը կը դադրեցընեն:
- 9 Իմաստուն մարդը երբոր յիմարին հետ վեճարանութիւն կ'ընէ,  
Թէ սրդողի և թէ ծիծաղի՝ հանդիստ չըլլար:
- 10 Արիւնահեղ մարդիկ արդարը կ'ատեն .

Բայց ուղեղները անոր որպիսութիւնը կը հարցընեն:

- 11 Յիմարը իր միտքը բոլորովն կը յայտնէ .  
Բայց իմաստունը զանիկա ուրիշ ատենի կը պահէ:
- 12 Սուտ խօսքերու ականջ դնող իշխանին Բոլոր ծառանները չար կ'ըլլան:
- 13 Աղքատը ու բռնաւորը իրարու հանդիպեցան,  
Երկուքին ալ աչքերուն լոյս տուողը Տէրն է:
- 14 Աղքատները ճշմարտութեամբ դատող թագաւորին ամօրոք  
Յաւիտեան հաստատ կ'ըլլայ:
- 15 Գաւազանը ու յանդիմանութիւնը իմաստութիւն կու տայ .  
Բայց էր Կաշառքը քաղաք տղան իր մայրը կ'ամբուցընէ:
- 16 Երբոր ամբարիշտները շատնան, յանցանքը կը շատնան .  
Բայց արդարները անոնց իշխալը պիտի տեսնեն:
- 17 Խրատէ քու որդիդ, որ քեզ հանդատացընէ,  
Եւ քու հողիդ զուարճացընէ:
- 18 Առանց մարդարեութեան Ժողովուրդը կը խտորի,  
Բայց օրէնքը պահողը երջանիկ կ'ըլլայ:
- 19 Հասկըցող ու պատասխան չտուող ծառան խօսքերով չխրատուիր:
- 20 Իր խօսքերուն մէջ արտօրացող մարդ մը տեսար .  
Աւելը յոյս կայ յիմարէն քան թէ անկէ:
- 21 Թէ որ մէկը իր ծառան տղայութենէն փափկութեամբ կը մեծցընէ,  
Վերջապէս անիկա իր տղան կ'ըլլայ:
- 22 Բարկասիրտ մարդը կուր կը հանէ,

- Եւ ցասկոտ մարդը շատ յանցանքներ է բռնէ:
- 23 Մարդուն հպարտութիւնը զենքը կը կործանէ:
- Բայց հեղահոյի մարդը վառք կը վատարկի:
- 24 Գողին ընկեր եղողը իր հողին կ'ատէ,  
Անկեա ներդումը կը լսէ, ու էր բնորոշը չը-  
սայտներ:
- 25 Մարդու վակը որդայթի մէջ կը ձգէ.  
Բայց Տէրոջը ապաւինողը ամառը ապաստա-  
նարան կ'ունենայ:
- 26 Շատերը իշխանին երեսը կը փնտռեն.  
Բայց մարդուն իրաւունքը Տէրոջմէն է:
- 27 Անօրէն մարդը արդարենբուն զգուսի է,  
Եւ ուղղութեամբ քալողը ամբարշտին զըղ-  
ուսի է:

ԳԼ Լ

- 1 Յակեւան Ազուրին խօսքերը՝  
Այսինքն պատգամը՝ որ անկեա Իթիելին  
խօսեցաւ,  
Իթիելին և Ուրբալին:
- 2 Յիրաւի ևս աշխարհէ թանձրամիտ եմ,  
Ու ևս մարդկային խոհեմութիւն չունիմ:
- 3 Եւ իմաստութիւն չտրվեցայ,  
Ու Ամենասուրբին զիտութիւնը չեմ զիտեր:
- 4 Երկիրը ս՛վ ելաւ ու իջաւ.  
Հովը իր ձեռքերուն մէջ ս՛վ ժողվեց.  
Ջուրերը էր հանդերձին մէջ ս՛վ ամփոփեց.  
Երկրիս բոլոր ծայրերը ս՛վ հաստատեց.  
Անոր անունը ի՞նչ է, ու անոր որդւոյն  
անունը ի՞նչ է.  
Թէ որ զիտեմ ըսէ:
- 5 Աստուծոյ ամէն խօսքերը մարութն են.  
Անկեա իրեն ապաւինողներուն ստպար է:

- 6 Դուն անոր խօսքերուն վրայ բռն մի աւել-  
ցրներ,  
Որ չըլլայ թէ քեզ յանդիմանէ, ու դուն  
ստախոս երեսնա:
- 7 Քեզմէ երկու բան կը խնդրեմ,  
Մեռնելէս առաջ շունչ ինձմէ մի արդիլեր:
- 8 Ունայնութիւնը և սուտ խօսքը ինձմէ հե-  
ռացուր.  
Ինձի աղբարտութիւն կամ հարստութիւն  
մի տար.  
Իմ սովորական հացովս զիս կերակրէ:
- 9 Չըլլայ որ կշտանամ և քէ ուրանամ,  
Ու Տէրը ս՛վ է, ըսեմ:  
Եւ չըլլայ որ աղբատանամ ու զողութիւն  
րնեմ,  
Եւ իմ Աստուծոյս անունը պարագ սեղը  
բէրնա առնեմ:
- 10 Ծառայի մը համար իր տիրոջը ամբաս-  
տանութիւն մի ըներ,  
Չըլլայ որ քեզի անէծք տայ, ու դուն յան-  
ցաւոր գտնուիս:
- 11 Յեղ կայ որ իր հայրը կ'անիծէ,  
Եւ իր մայրը չօրհներ:
- 12 Յեղ կայ որ իր աչքին առջևը մարութն է,  
Սակայն իր ալտեղութենէն լուացուած չէ:
- 13 Յեղ կայ որ անոր աչքերը խիստ ամբար-  
տաւան են,  
Ու անոր արտանունքները բարձրացած են:
- 14 Յեղ կայ որ անոր ակռաները սուրբուրդէն  
են,  
Եւ անոր ժանիքները դանակներու դէն են,  
Աղբատները երկրիս վրայէն  
Ու տնանկները մարդոց մէջէն ուտելու հա-  
մար:

- 15 Տղբուհը երկու աղջկի ունի .  
Տուր՝ տուր՝ ! Ըսէ՛ն :  
Աս երեքը չեն կշտանար ,  
Ու չորս բան կայ որ Հերիք է չեն ըսեր .
- 16 Գերեզմանը , ամուլ արգանդը ,  
Երկիրը որ ջրով չկշտանար  
Ու կրակը որ Հերիք է չըսեր :
- 17 Ան աչքը որ իր հայրը ծաղը կ'ընէ ,  
Եւ իր մորը հնազանդիլը կ'անարգէ ,  
Չորեքուն ազուաները պիտի փորեն ,  
Ու զանիկա արծիւներուն ձագերը պիտի ուտեն :
- 18 Աս երեք բանը ինձի զարմանալի կ'երենայ ,  
Եւ չորս բան կայ որ չեմ՝ զիտեր .
- 19 Օգին մէջը արծիւին ճամբան ,  
Ազառածի վրայ օձին ճամբան ,  
Ծոփուն մէջը նաւուն ճամբան  
Ու աղջկան բով էրիկ մարդուն ճամբան :
- 20 Շնացող կնկան ճամբան ալ այնպէս է .  
Կ'ուտէ ու բերանը կը սրբէ ,  
Եւ Չարութիւն չըրի՝ կ'ըսէ :
- 21 Երեք բանի համար երկիրը կը դողայ ,  
Ու չորս բան կայ , որոնք չկրնար տանիլ .
- 22 Ծառան երբոր թագաւորէ ,  
Յիմարը երբոր հացով կշտանայ ,  
23 Ատել ինիկը երբոր կարգուի  
Եւ աղախինը երբոր իր տիկնոջը ժառանգը ըլլայ :
- 24 Երկրիս վրայ չորս բան կայ որ պղտիկ են՝ ,  
Բայց անոնք շատ խելացի են .
- 25 Մըջիւնները զօրաւոր ժողովուրդ մը չեն ,  
Բայց իրենց կերակուրը ամառուընէ կը պատրաստեն .

- 26 Ճագարները տկար ժողովուրդ մըն են ,  
Բայց իրենց տուները վէմերու մէջ կը շինեն .
- 27 Մարախները թագաւոր չունին ,  
Սակայն ամէնը գունդ գունդ գուրս կ'ելլեն .
- 28 Մողէսը էր ձեռքերովը Դարբերան կը փակէ ,  
Ու թագաւորաց պալատներուն մէջ կը զըստնուի :
- 29 Աղէկ քաղղ երեք բան կայ .  
Եւ չորս բան կայ որ գեղեցիկ քալուածք ունի .
- 30 Առիւծը՝ որ ամէն անասուններէն զօրաւոր է ,  
Ու բնաւ մէկուն երեսէն ետ չդառնար .
- 31 Մէջքը կապած չէ՛ ու նոխազը ,  
Եւ թագաւորը՝ որուն ժողովուրդը իր հետն է
- 32 Թէ որ բարձրանալով յիմարութիւն ըրիք ,  
Կամ մէկ չարութիւն մը մտածեցիք ,  
Չեւրդ բերնիդ վրայ Խէ .
- 33 Վասն զի թէ որ կաթը ձե՛ծես՝ կողի կ'ելլէ ,  
Թէ որ քիթը ձմի՛ս՝ արիւն կ'ելլէ .  
Նոյնպէս թէ որ բարկութիւնը զրգուես՝ կռիւ կ'ելլէ :


## ԳԼ. ԼԱ


- 1 Լեմուէլ թագաւորին խօսքերը՝  
Այսինքն պատգամը՝ որ անոր մայրը անոր ստովեցուց :
- 2 Ի՞նչ շէ՛մ , ով որդեակ իմ ,  
Ի՞նչ շէ՛մ , ով իմ որովայնիս որդին ,  
Ի՞նչ շէ՛մ , ով իմ ուխտերուս որդին :
- 3 Բու զօրութիւնդ կնիկներուն մի տար ,  
Ոչ ալ բու ճամբաներդ թագաւորներ բնաջինջ ընտղներուն :
- 4 Ով Լեմուէլ , թագաւորներուն չվայլեր ,


- Գինի խմելը թագաւորներուն չվայելը,  
Եւ օղի խմելը իշխաններուն չվայելը .
- 5 Չըլլայ որ խմեն ու օրէնքը մոռնան,  
Եւ տառապեալներէն մէկուն դատաստանը  
ծռեն :
- 6 Օղին՝ կորսուելու վրայ եղողին,  
Ու գինին դառնահոգիներուն տուէր,  
7 Որ անոնք խմեն ու իրենց աղքատութիւնը  
մոռնան,  
Եւ իրենց նեղութիւնը մէլմին ալ չլինեն :
- 8 Բաց քու բերանդ համր մարդուն համար,  
Ու բոլոր անխնամ մնացածներուն դատին  
համար :
- 9 Բաց քու բերանդ, արդարութեամբ դատէ,  
Եւ աղքատին ու տնանկին դատաստանը  
տես :
- 10 Առաքինի կնիքը ո՞վ կրնայ դռնել .  
Անոր գինը դոհարներէն շատ աւելի է :
- 11 Անոր էրկանք սիրտը անոր վրայ վատահ է,  
Ու աւարի կարօտ չըլլար :
- 12 Անիկա իր կենացը բոլոր օրերուն մէջ  
Անոր բարիք կը բերէ և ոչ թէ չարիք :
- 13 Բուրդ ու քթան կը փնտրէ,  
Եւ ուզածը ձեռքովը կը գործէ :
- 14 Անիկա վաճառահանի նաւերուն կը նմանի .  
Իր հացը հեռու տեղէն կը բերէ :
- 15 Եւ անիկա գիշերով կ'իլլէ, ու տանը խո-  
րոչ կերակուր՝  
Եւ իր աղախիններուն բաժին կու տայ :
- 16 Արտի մը վրայ կը խորհի ու զանիկա ծախու-  
կատնէ,  
Եւ իր ձեռքերուն պտուղէն այդի կը տնկէ :
- 17 Իր մէջքը զօրութեամբ կը պնդէ,  
Ու իր բազուկները կը զօրացընէ :
- 18 Իր վաստակին աղէկ ըլլալը կը հասկընայ .

- Անոր ճրագը գիշերը չմարիր :
- 19 Իր ձեռքերը իլեկին կ'երկընցընէ,  
Ու ափովը բոքը կը բռնէ :
- 20 Ձեռքը աղքատին կը բանայ,  
Ու ձեռքերը կարօտներուն կ'երկընցընէ :
- 21 Իր տանը խոչը համար ձեռնէն չվախնար .  
Քանզի բոլոր ընտանիքը կրկին հանդերձ հա-  
ղած են :
- 22 Իրեն ծածկողներ կը շինէ .  
Իր հանգերծը բեհեզ ու ծիրանի է :
- 23 Անոր էրկիկ կը ծանչցուի դռներուն մէջ՝  
Երբոր երկինքի ձերբուն հետ կը նստի :
- 24 Կտաւ կը դործէ ու կը ծախէ,  
Եւ վաճառականներուն զօտիներ կու տայ :
- 25 Զօրութիւն ու փառք կը հագնի .  
Ու ետքի օրերը պիտի ուրախանայ :
- 26 Իր բերանը խմաստութեամբ կը բանայ,  
Եւ իր լեզուին վրայ քաղցրութեան օրէնք  
կայ :
- 27 Իր տանը ճամբաները կը քննէ,  
Եւ ծուրութեան հացը չուտեր :
- 28 Անոր տղաքը կ'իլլեն ու զանիկա երանելի  
կ'անուանեն .  
Անոր էրկին ալ զանիկա կը գովէ, բռնուլ .
- 29 Շատ աղջիկներ առաքինի եղան,  
Բայց դուն ամենէն զերազանց եղար :
- 30 Վայելչութիւնը սուտ է, ու գեղեցկութիւ-  
նը ունայն է .  
Սուրճի Տէրովմէ վախցող կնիկը պիտի  
գովուի :
- 31 Տուէր անոր իր ձեռքին պտուղէն .  
Ու անոր գործքերը դռներու մէջ գովեն զա-  
նիկա :

The first thing that I observed  
 when I stepped out of the boat  
 was the smell of the sea  
 and the sound of the waves  
 breaking against the rocks.  
 I had never before  
 experienced such a  
 feeling of freedom  
 and independence.  
 The air was fresh  
 and invigorating,  
 and the sun was  
 shining brightly  
 in the sky.  
 I felt as if I  
 had been reborn.  
 The world was  
 so beautiful and  
 so full of life.  
 I had found  
 what I had been  
 searching for  
 all my life.  
 I was free.  
 I was happy.  
 I was home.







0015035

2001

« Ազգային գրադարան



NL0015035

